Ազգ
Azg
16 ԱՊՐԻԼ 2011 ՇԱԲԱԹ 68(4687)
ISSN: 1829-1651

# «Անմեղ նահատակի հիշատակին» շարժումը շարունակվում է

Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը 2010-ից նախաձեռնել եւ իրականացնում են «Անմեղ նահատակի հիշատակին» շարժումը, որը նախատեսում է մինչ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը Հայաստանի ողջ տարածքում տնկել 1,5 մլն ծառ: Անցյալ տարվա մեր համարներում տեղեկացրել ենք արդեն, որ շարժումը ներառել է հանրապետության մի շարք ուսումնական հաստատություններ, զինվորական զորամասեր: Տարբեր մարզպետարաններ միացել են ՀՀԿ եւ ՌՀՄ նախաձեռնությանը:

Հերթական ծառատունկը տեղի կունենա այսօր՝ ժամը 11.00-ին՝ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի այգու հարակից տարածքում: Ծառատունկին մասնակցելու է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Տագնապը հասավ Սիրիա, այսինքն նաեւ հայությանը

Շուրջ 3 ամսից ի վեր արաբական երկրներում մոլեգնող տագնապը արդեն 3 շաբաթ է, որ անհանգիստ վիճակում է պահում նաեւ Սիրիային:

Դըրաա, Լաթաքիա, Բանիաս սիրիական քաղաքներից հետո խռովությունները երեքշաբթի օրը հասան նաեւ մինչ այդ հանդարտ ու հանգիստ Հալեպ հնագույն քաղաքը, որտեղ մահմեդական ու քրիստոնյա տարբեր համայնքների հետ ապրում են նաեւ մեր բազմահազար հայրենակիցներ իրենց եկեղեցիներով, դպրոցներով, ազգային, մշակութային, բարեգործական հաստատություններով ու կազմակերպություններով: Ապրում են որպես երկրի լիարժեք քաղաքացիներ՝ սիրիական մշակույթի ու տնտեսության մեջ իրենց կայուն ներդրումներով:

Անշուշտ, ինչպես արաբական երկրներից շատերում– Թունիս, Եգիպտոս, Բահրեյն, Հորդանան, Մարոկկո, Եմեն ու Լիբիա– Սիրիայում էլ կուտակված նմանատիպ շատ հարցեր կան՝ քաղաքական, սոցիալական եւ այլ բնույթի: Բայց ինչպես ասում են արեւմտյան քաղաքագետները՝ անալոգիաները բնավ ամբողջությամբ իրար չեն համապատասխանում: Յուրաքանչյուր հեղափոխություն կամ հասարակական ընդվզում ունի իր եւ միայն իրեն հատուկ պատճառները, առանձնահատկությունները: Սիրիան արտաքին միջամտության համար ունի այլ «գրավչություն»: Արաբական աշխարհում Սիրիան այն միակ երկիրն է, որ 1948 թ.-ից ի վեր տեւական պատերազմական վիճակի մեջ է գտնվում Իսրայելի հետ, որը հաջորդական 4 պատերազմներից հետո դեռեւս գրավման տակ է պահում Գոլանի բարձրավանդակը: Երկրորդ՝ Արաբական աշխարհում Դամասկոսը Թեհրանի միակ բարեկամն է Իսրայելի դեմ իր պայքարում եւ ընդհանրապես: Ահա այս երկու հանգամանքները այդ երկիրը դարձնում են Իսրայելի ու նրա արեւմտյան դաշնակիցների համար գլխավոր թիրախ:

Հասարակական կարծիքը Հայաստանում ընդհանրապես տեղեկատվական առօրյա իր սնունդն ստանում է արեւմտյան աղբյուրներից, ավելի ճիշտ՝ միջնորդավորված նրանցից: BBC, CNN, Euronews, «Ալ Ջազիրա» եւ մյուսները նման պարագաներում գրեթե միշտ կողմնակալ են եւ նպատակաուղղված, հետեւաբար՝ միակողմանի: Այդ միակողմանիության մեջ բնականաբար չի երեւում Սիրիայում վերջին 3 շաբաթներում պատահող խռովությունների լրիվ, ամբողջական պատկերը: Այդ երկրում ավելի քան 40 տարուց ի վեր ընդհատակյա գործում է «Մուսուլման եղբայրների» ամենակատաղի թեւերից մեկը, որին շուրջ 30 տարի առաջ դաժանորեն պատժեց հանգուցյալ նախագահ Հաֆեզ Ասադը: Այդ կազմակերպությունը հիմա ամենակատաղի հակառակորդն է նախագահ Բաշար Ասադին ու նրա իշխանությանը: Այս օրերին «Մուսուլման եղբայրները» շատ աշխույժ են ու վտանգավոր, մանավանդ որ զինված են ու հանդուգն: Երկրի տարբեր քաղաքներում նրանք իրականացնում են անվտանգության ուժերի դեմ զինյալ գործողություններ, հրահրում ազգաբնակչության մեջ գոյություն ունեցող ապրուստի եւ ազատությունների սահմանափակման դեմ բնական դժգոհությունները:

Իրերի այս կացության մեջ բնականաբար մեր առաջին մտահոգ հայացքը պետք է ուղղվի դեպի այս երկրում եւ հարեւան Լիբանանում ապրող (վերջինիս արդեն փխրուն վիճակը մեծապես կախյալ է առաջինի կացությունից) հայությանը: Սիրիահայությունը ներկա ռեժիմի պայմաններում հանգիստ եւ ապահով է զգում իրեն եւ ունի զարգացման հեռանկարներ թե՛ ազգային, թե՛ անհատական-տնտեսական առումով: Որեւէ փոփոխություն, մանավանդ կրոնական ֆունդամենտալիզմի դրսեւորմամբ, սպառնում է արտագաղթի մղել Հալեպի, Դամասկոսի, Քամիշլիի, Լաթաքիայի ու Քեսաբի հայությանը, ոչնչացնել հայաշունչ մեր ամենակարեւոր գաղթօջախներից մեկը, իր հերթին բոլորովին անորոշ ապագայի մատնելով հարեւան Լիբանանի հայագաղութը՝ սկսյալ սահմանագլխին գտնվող Այնճար հայկական գյուղից:

Երկրորդ՝ տարածաշրջանում Սիրիան մեր երկրի՝ Հայաստանի հուսալի բարեկամներից է, որը լավ հարաբերություններից բացի միջազգային կազմակերպություններում բնավ չի քվեարկում մեր երկրի դեմ:

Երրորդ՝ Սիրիայում որեւէ փոփոխություն, մանավանդ իսրայելական կամ արեւմտյան խարդավանքով, բերելու է Թեհրանի ազդեցության թուլացմանը այդ երկրում, ավելի լայն բացելով տարածքը թուրքական նորանոր ներթափանցումների առաջ, ինչը լրջագույն սպառնալիք է մեր երկրին տարածաշրջանային հարաբերությունների տեսակետից:

Իհարկե, ոչ Հայաստանը եւ ոչ էլ հայությունը ի վիճակի չեն ազդու ներգործություն ունենալ Սիրիայում տեղի ունեցող զարգացումների վրա: Սակայն կարող ենք բարոյապես զորակցել, ինչպես նաեւ ազգային շահերի գիտակցությամբ մոտենալ այնտեղ ծավալվող իրադարձություններին եւ այդ, միայն ա՛յդ տեսանկյունից գնահատել դրանք:

Պատրանքներ չունենանք. ողջ աշխարհը, ամենաթույլ երկրից մինչեւ ամենաուժեղը, ղեկավարվում են միայն իրենց ազգային շահերով: Մենք պետք է վարվենք նույնպես:

Մաղթենք, որ Սիրիայի իշխանություններին ի վերջո կհաջողվի հիմնարար բարեփոխումներով եւ միաժամանակ կարգուկանոնի եւ արդարության վերահաստատումով ներքին խաղաղությունը վերադարձնել այդ երկրին:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառում ԱՄՆ Կոնգրեսում

Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 20 կոնգրեսականներ, որոնք նախագահ Բարաք Օբամայից պահանջել են 1915-ի իրադարձությունների՝ որպես ցեղասպանության բնութագրումը, իսկ Թուրքիայից՝ ցեղասպանության ճանաչումը, ընդգծելով Կոնգրեսում հայկական բանաձեւի անցկացման անհրաժեշտությունը:

Ինչպես ապրիլի 14-ի համարում գրում է «Զումհուրիեթը», որոշ կոնգրեսականներ պնդել են, որ «1915-ի իրադարձությունների առնչությամբ Թուրքիան ներողություն պետք է խնդրի հայ ժողովրդից, եւ անհնար են համարել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացումը, քանի դեռ թուրքական պետությունը չի ճանաչել ցեղասպանությունը»:

Միջոցառմանը ելույթ է ունեցել Դեմոկրատական կուսակցության Կալիֆոռնիայի ներկայացուցիչ Ադամ Շիֆը: Նա մասնակիցներին տեղեկացրել է ապրիլի 24-ի առաջիկա ելույթում 1915-ի իրադարձությունները իբրեւ ցեղասպանություն բնութագրելու պահանջով նախագահ Օբամային հասցեագրված նամակի մասին, որն այնուհետեւ ընթերցել է:

Կոնգրեսական Շիֆը, ըստ թուրքական թերթի, նամակում նախ հիշեցնում է, որ Օբաման նախքան նախագահ ընտրվելը 1915-ի իրադարձությունների առնչությամբ «ցեղասպանություն» բառն է օգտագործել, ապա եւ շարունակում. «Ցավոք, ինչպես անցյալ տարի, այնպես էլ 2009-ին «ցեղասպանություն» բառը չեք օգտագործել: Գուցե ամերիկյան վարչակարգի որոշ պատասխանատու գործիչներ մտածում էին, որ ԱՄՆ ձգձգելով ցեղասպանության ճանաչումը, կարող է արագացնել Թուրքիայի հետ Հայաստանի հաշտեցումը: Հիմա արդեն ակնհայտ է, որ արձանագրությունների գործընթացը ոչ այլ ինչ էր, քան «ցեղասպանություն» արտահայտության օգտագործումը կանխարգելելու եւ Կոնգրեսում հայկական բանաձեւի քննարկումը կասեցնելու նկրտումով Անկարայի արած հաշվենկատ քայլ: Քանի որ հիմա արդեն երեւան է հանված ճշմարտությունը, ուստիեւ պարոն նախագահ, կոչ եմ անում Ձեզ, վերադառնալ նախկին դիրքը, որը 2008-ին հետեւողականորեն պաշտպանում էիք»:

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի առաջնակարգ գործիչներից, նախորդ նստաշրջանում դեմոկրատական մեծամասնության առաջնորդ Ստենի Հոյերն ասել է, որ «իրենք այս գիշեր հիշատակում են մարդկության պատմության մեջ ամենաողբերգական իրադարձությունները»: Նա նշել է, որ 1915-ի ազդեցությունները զգացվում են առ այսօր, եւ ավելացրել է. «Սա անցյալի խնդիրը չէ, այլ ներկայի: Անեն ջանք գործադրելու եմ, մինչեւ որ Կոնգրեսն ընդունի հայկական բանաձեւը»:

Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախկին նախագահ, դեմոկրատական Հովարդ Բերմանը բանաձեւի հաստատման հարցում պաշտպանել է Հոյերին, ասելով. «Թեեւ ինձ հիասթափեցրել է այն, որ մինչեւ օրս չհաջողվեց հասնել նպատակին, սակայն դա չի ազդում այդ ուղղությամբ իմ ունեցած վճռականության վրա: Որոշ երկրներ քաջատեղյակ լինելով հանդերձ ճշմարտությանը, Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակության պատճառով խուսափում են այդ մասին արտահայտվելուց: Համոզված եմ, որ Թուրքիան մի օր կընդունի իրողությունը, սակայն վերջինիս ժխտողականությունը չպետք է նրա օրինակին հետեւելու հիմք հանդիսանա ԱՄՆ վարչակարգի համար»:

Սենատոր Մենենդեսն էլ ավելացրել է, որ ԱՄՆ պետքարտուղարության արխիվում կան ցեղասպանության փաստը հաստատող բազմաթիվ վավերագրեր, ինքը Սենատում շարունակելու է խոչընդոտել դեսպանի այն թեկնածուների նշանակմանը, որոնք 1915-ի իրադարձությունները որպես ցեղասպանություն չեն բնութագրում:

Հ. Չ.

# Գիտությունների ազգային ակադեմիայի հաշվետու ժողովը


ՖՈՏՈԼՈՒՐ

Գիտությունների ազգային ակադեմիայում երեկ տեղի ունեցավ ԳԱԱ տարեկան ընդհանուր հաշվետու ժողովը, որին ներկա էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, նաեւ ԱԺ պատգամավորներ ու նախարարներ:

Ժողովի մասնակիցները նախ մի րոպե լռությամբ հարգեցին կյանքից հեռացած ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանի, Ստեփան Մացոյանի, Մելիս Մովսեսյանի ու ԳԱԱ թղթակից անդամ Նազարեթ Թովմասյանի հիշատակը: Այնուհետեւ Վեհափառ հայրապետի ողջույնի խոսքը փոխանցեց եպիսկոպոս Անուշավան Ժամկոչյանը: ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ակադեմիայի նախագահության 2010 թվականի հաշվետվությունը՝ ամփոփելով անցյալ տարվա գիտական գործունեության արդյունքները:

Անցյալ տարի առաջին անգամ հանրահայտ գիտնական Միշել Մայորին ու նրա խմբի անդամներ Նունո Սանթոսին ու Գարիկ Իսրայելյանին ակադեմիայում հանձնել են Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ: Ռադիկ Մարտիրոսյանը հաշվետու տարվա մեջ կարեւոր ձեռքբերում համարեց «Գիտությունների ակադեմիայի մասին» օրենքի ընդունումը: Բացի դրանից՝ որպես աջակցություն երիտասարդ գիտնականներին՝ հիպոթեքային վարկավորմամբ գիտնականների համար կառուցվում են 200 բնակարաններ: Ռադիկ Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց Սերժ Սարգսյանին այն բոլոր նախաձեռնությունների համար, որոնք աջակցում են մեր գիտությանն ու գիտնականներին:

Հաշվետվության համաձայն, ներկայումս ակադեմիայի համակարգում աշխատում են 4056 հոգի, եւ համակարգի աշխատողների ամսական միջին աշխատավարձը մի մարդու հաշվով կազմել է 59,7 հազար դրամ: Անցյալ տարի ակադեմիայի համակարգի համար պետական ֆինանսավորումը կազմել է շուրջ 4 միլիարդ 142 միլիոն 763 հազար դրամ:

Երեկ ելույթներով հանդես եկան ԼՂՀ-ի Գիտական կենտրոնի տնօրեն Սիմինո Բաբայանը, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը եւ ուրիշներ: Իր խոսքից հետո Աշոտ Մելքոնյանը հանրապետության նախագահին հանձնեց վերջերս հրատարակված «Հայոց պատմության» առաջին հատորը:

Ի. Պ.

# «Վերին Լարս»-ում մնացել են ՀՀ 80 քաղաքացիներ

Հյուսիսային Օսիայի «Վերին Լարս» անցակետում, որը մի քանի օր փակ է ձնահյուսի վտանգի պատճառով, մի քանի ավտոբուսներ, միկրոավտոբուսներ եւ մարդատար մեքենաներ են կուտակվել: Հյուսիսային Օսիայի ԱԻՆ մամուլի ծառայության ղեկավար Յուլիա Ստարչենկոն հայտարարել է, թե ճանապարհը կբացվի վրացական կողմի հետ համաձայնեցնելուց հետո միայն, քանի որ ձնահյուսի վտանգն առաջացել է Վրաստանում՝ Կրեստովի լեռնանցքում: Անցակետում կանգնած մեքենաներում Հայաստանի քաղաքացիներ են, մոտ 80 մարդ: Ստարչենկոյի խոսքով, նրանց համար տաքանալու եւ սննդի հատուկ կետ է բացվել: Մոտ 20 մարդու՝ ներառյալ կանանց եւ երեխաների տեղավորել են Վլադիկավկազի հյուրանոցներում:

Հ. Ա.

# Կարապետ Ռուբինյանը դադարեցրել է ՀԱԿ-ին իր անդամությունը

**Այս մասին հայտարարությունը նա տարածել է Facebook սոցիալական կայքի իր էջում:**

«Սույն հայտարարությունը հրապարակելու պահից դադարեցնում եմ իմ անդամությունը Հայ ազգային կոնգրեսին: Քաղբանտարկյալների հանդեպ իմ բարոյական պարտավորվածությունը, որը մինչ այս հետ էր պահում ինձ այս քայլից, շարունակելու է խայթել խիղճս: Բայց, մյուս կողմից, շուրջս ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը, մոլեռանդ շարքերի թշնամանքը, զրպարտելու, պիտակավորելու սկիզբ առած արշավը այլեւս անհնարին ու իմաստազուրկ են դարձնում այդ վերջին կամրջի պահպանումը: Կոնգրեսից իմ դուրս գալու հանգամանքը ոչ մի կերպ չի նվազեցնում իմ անկեղծ հիացմունքը՝ հանուն ժողովրդավարական Հայաստանի Հանրապետության երկարամյա պայքարի իմ ընկերների վճռականության ու նվիրվածության հանդեպ: Եվ, ինչ խոսք, ասվածը առաջին հերթին վերաբերում է իրենց համոզմունքների համար բանտերում հայտնված մեր ընկերներին: Չի նվազեցնում նաեւ իմ վճռականությունը՝ նույնպիսի նվիրումով, որպես Հայաստանի շարքային քաղաքացի, շարունակելու այդ պայքարը», ասված է հայտարարության մեջ:

# Նախարար Նալբանդյանի հանդիպումները Բեռլինում

Բեռլինում երեկ տեղի է ունեցել Աֆղանստանին նվիրված արտգործնախարարների մակարդակով Հյուսիսատլանտյան դաշինքի խորհրդի ընդլայնված հանդիպումը, որին մասնակցել են ՆԱՏՕ-ի անդամ եւ Աֆղանստանում միջազգային անվտանգության ուժերին մասնակցող շուրջ հինգ տասնյակ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներ: Ելույթ ունենալով նախարարական հանդիպմանը՝ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը վերահաստատել է ՀՀ հանձնառությունը՝ շարունակելու օժանդակությունը Աֆղանստանում խաղաղության, անվտանգության, կայունության եւ ներազգային համերաշխության հաստատման ուղղությամբ գործադրվող ջանքերին: Էդվարդ Նալբանդյանը նաեւ շնորհակալություն է հայտնել Գերմանիայի իշխանություններին՝ Աֆղանստանում հայկական զորախմբի տեղակայման եւ ծառայությանն առնչվող հարցերում արդյունավետ համագործակցության համար:



ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության հաղորդմամբ, Բեռլինում Էդվարդ Նալբանդյանը նաեւ հանդիպում է ունեցել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Քրիստոֆ Հոյսգենի հետ: Զրուցակիցները անդրադարձել են հայ-գերմանական բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդման ուղիներին, քննարկել են միջազգային եւ տարածաշրջանային խնդիրների լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել անցյալ տարի ՀՀ նախագահի Գերմանիա կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքին՝ համագործակցությունը նոր բովանդակությամբ համալրելու նպատակով: Երկուստեք նշվել է, որ երկու երկրների միջեւ հաստատված է բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն, արդյունավետորեն զարգանում է փոխգործակցությունը երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով, ստեղծվել է ամուր իրավա-պայմանագրային դաշտ, ընդլայնվում են գործարար կապերը, համագործակցությունը՝ մշակութային եւ կրթական ոլորտներում: Քրիստոֆ Հոյսգենի խնդրանքով նախարար Նալբանդյանը ներկայացրել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերջին զարգացումները: Էդվարդ Նալբանդյանի հաջորդ հանդիպումը Ավստրալիայի արտգործնախարար Քեվին Ռուդի հետ է եղել: Նախարարները գոհունակությամբ նշել են, որ միջազգային ֆորումների շրջանակներում իրենց հանդիպումներն արդեն ավանդական են դարձել, եւ դա լավ հնարավորություն են քննարկելու երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր: Նախարարները քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծմանն ուղղված միջազգային հանրության ջանքերը: Համաժողովի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը նաեւ կարճատեւ զրույցներ է ունեցել մի շարք երկրների իր գործընկերների հետ:

Հ. Ա.

# «Մեծարգո Էրդողանը անտեղյակության կամ չարամտության պատճառով սխալ է թույլ տվել»

*Հայտարարում է ֆրանսիացի խորհրդարանականը՝ հանդիմանելու համար դատապարտելով Թուրքիայի վարչապետին*

«**Ազգի**» նախորդ համարում Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում Թուրքիայի վարչապետ Էրդողանի ապրիլի 13-ի ելույթի առնչությամբ գրել էինք, որ նա կոշտ պատասխաններ է տվել խորհրդարանականների հարցերին: Խոսքն ամենեւին էլ ՀՀ ԱԺ պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի եւ Զարուհի Փոստանջյանի մասին չէր, քանի որ ԵԽԽՎ նախագահ Չավուշօղլուն, ճնշում գործադրելով քարտուղարության վրա, ի վնաս հայ խորհրդարանականների, խախտել էր հարց ուղղելու հերթականությունը, որպեսզի նրանց զրկի այդ իրավունքից: Ի դեպ, այդ մասին վկայել են CNN-turk-ն ու թուրքական թերթերը, մասնավորապես՝ «Աքշամը»:

Մինչ վարչապետ Էրդողանը առաջիկա խորհրդարանային ընտրությունների քարոզարշավի մեկնարկը Ստրասբուրգում, այն էլ եվրոպացիներին հանդիմանելու միջոցով սկսելու համար ոգեւորվում էր, եւ այդ ոգեւորությունը լայն արձագանք էր գտնում նրա «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ընտրողների շրջանում, ավելի քան կոշտ հակազդեցությամբ հանդես եկան Եվրոխորհրդարանի Թուրքիայի հարցով զեկուցող Ռիա Օմեն Ռույտենն ու Եվրոխորհրդի ֆրանսիացի խորհրդարանական Մուրիել Մառլանդ-Միլիթելլին:

Հիշեցնենք, որ տիկին Մուրիելի Թուրքիայի կրոնական փոքրամասնություններին առնչվող հարցի վերաբերյալ Էրդողանն ասել էր. «Կուզենայի Ձեզ Թուրքիա հրավիրել: Դուք Թուրքիային մոտիկից չեք հետեւում, առաջնորդվում եք Ձեր լսածներով: Կարծես մեր ընկերը ֆրանսիացի է: Թուրքիայի նկատմամբ էլ շատ ֆրանսիական... Սա շատ տարածված արտահայտություն է Թուրքիայում»:

Մինչ ֆրանսիացի խորհրդարանականի հակազդեցության մասին գրելը, նշենք, որ Թուրքիայի հանդեպ ֆրանսացի լինել, նշանակում է ոչ ճիշտ մոտեցում ցուցաբերել թուրքական պետության հանդեպ: Օրինակ, հակադրվել նրա անդամակցությանը Եվրամիությանը, ճանաչել Հայոց ցեղասպանությունը, կամ արտահայտվել էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների վրա գործադրվող ճնշումների մասին:

Համենայն դեպս, տիկին Մուրիելը, նկատի ունենալով Էրդողանին, թուրքական NTV-ի վկայությամբ, ասել է. «Նրա առաջին նախադասությունը ամենեւին էլ հաճելի չէր ֆրանսիացիների համար: Ինչպես երեւում է, «ֆրանսիական» բառը Թուրքիայում վատ իմաստ է կրում: Այդ պահին չէի կարող նրան պատասխանել, սակայն նրա այս վերաբերմունքը առանձնապես չի համապատասխանում Եվրոխորհրդի քաղաքավարության կանոններին: Դուք չեք կարող առանց ճանաչելու արհամարհել մարդուն: Ես ընդամենը հարցրեցի, թե Թուրքիայում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքը հավասար է, թե ոչ: Նա կարող էր ասել՝ այո: Սակայն մեծարգո Էրդողանը անտեղյակության կամ չարամտության պատճառով սխալ թույլ տվեց: Ինձ զարմացրել է այն, որ լինելով վարչապետ, նա անհատին վերաբերող դավանանքի ազատությունը չի կարողանում զանազանել հասարակական ինստիտուտներից, որոնք պարտավոր են անկողմնակալ լինել բոլոր կրոնների հարցում: Եթե վարչապետ ես, ապա նախքան մեկին դատապարտելը պետք է գիտելիքներ ձեռք բերես: Ի դեպ, ես մոր կողմից հայ եմ, մեծ հայրս՝ Սեյրան էֆենդին էր: Մեծ մորս հետ ապրում էր Ստամբուլի Գադիգյուղ թաղամասում: Այնտեղ գորգի գործարան ուներ: Մինչեւ 1915 թիվը հայրս ու մայրս Ստամբուլում են բնակվել: Մորս անունը Մաղլեն էր: Մի գիշեր ծնողներիս ընկերները եկել եւ դուռն են թակել, ասելով, որ տեղահանության եք ենթարկվելու, հապճեպ փախչել է պետք: Ես ողջ եմ մնացել իմ ծնողներին փրկող թուրք մահմեդական ընկերներիս շնորհիվ»:

Ինչ վերաբերում է Եվրոխորհրդարանի Թուրքիայի հարցով զեկուցող տիկին Ռույտենին, ապա նա ակնարկելով Թուրքիայում կալանված լրագրողների մասին, ընդգծել է. «Մամուլի ազատության սահմանափակումները ամենեւին էլ չեն մտնում Եվրոպայի առաջադրանքների մեջ: Եթե որեւէ լրագրող «Էրգենեքոնի» գործին է առնչվում, ապա նրան դատախազը պետք է հարցաքննի: Առանց մեղադրանքի հիմնավորման Թուրքիայում հարյուրավոր լրագրողներ են կալանվել: Չի կարելի այսքան մարդու կալանավայրում պահել, այն էլ առանց հանցանքն ապացուցելու»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

# 3 ամսվա ընթացքում Հայաստան է այցելել 31.700 իրանցի զբոսաշրջիկ

*Նրանցից յուրաքանչյուրը ծախսել է 1600 ԱՄՆ դոլար*

**Հայաստանը ոչ միայն հետաքրքրական ու գրավիչ երկիր է, այլեւ համարյա Եվրոպա բազմաթիվ իրանցիների համար, ովքեր նախընտրում են իրենց հանգիստը անցկացնել Հայաստանում:**

**Գիշերային ակումբներ, ուտեստներ, արբավայրեր. սրանք այն գլխավոր չափորոշիչներ են, որոնց համար իրանցիները նախընտրում են տարվա գլխավոր տոնը՝ Նովրուզը անցկացնել Հայաստանում: Տարվա առաջին եռամսյակում Հայաստան է այցելել Իրանի ավելի քան 31.700 քաղաքացի, որոնցից 25.000-ը Նովրուզի օրերին: Նախորդ տարվա համեմատությամբ իրանցի զբոսաշրջիկների թիվը կտրուկ աճել է. 2010-ի առաջին եռամսյակում Հայաստան այցելած իրանցի զբոսաշրջիկների թիվը կազմել է 28.000. ողջ տարվա կտրվածքով՝ 120.000 իրանցի զբոսաշրջիկ:**

**Նովրուզի տոնակատարության օրերին էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչությունը հարցում է անցկացրել իրանցիների շրջանում: Հարցմանը մասնակցած 100 իրանցուց 72-ը ցանկություն են հայտնել կրկին այցելել Հայաստան: Միջին հաշվարկներով մեկ իրանցի զբոսաշրջիկը Հայաստանում ծախսել է 1600 ԱՄՆ դոլար:**

**10 նիշանոց սանդղակով իրանցիները միջին են գնահատել Հայաստանում զբոսաշրջության որակը: Երկրի գրավչությունը, ծառայությունները, գների մատչելիությունը, ժամանցի վայրերի բազմազանությունը իրանցիները գնահատել են 6 միավոր, իսկ փողոցների մաքրությունը, տրանսպորտը, սնունդն ու տեղաբնակների հյուրընկալությունը՝ 7 միավոր:**

**«Ցուցանիշները միջինից բարձր են, սակայն դա չի նշանակում, որ ամեն ինչ հրաշալի է եւ անելիքներ չկան: Իհարկե կան խնդիրներ եւ մենք դեռ շատ հարցեր ունենք լուծելու, որպեսզի այցելուները հեռանան ոչ միայն բավարարված, այլեւ ակնկալիքները գերազանցած». «Նովոստիում» ասաց էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության պետ Մեխակ Ապրեսյանը: Իրանցիները դժգոհել են հուշարձանների վահանակների վրա միայն անգլերեն գրություններից, բնակիչների վատ անգլերենից, հյուրանոցների սակավությունից:**

**«Եղեք հյուրընկալ եւ հյուրասեր», խորհուրդ է տալիս Ապրեսյանը՝ հավելելով, որ քաղաքացիների բարեհամբույր պահվածքը զբոսաշրջության զարգացման լավագույն գնահատականներից է:**

**Նրա խոսքերով Հայաստան հիմնականում այցելում են Ռուսաստանից, Վրաստանից, Եվրոպական երկրներից եւ ԱՄՆ-ից:**

**«Սակայն այս տարի այդ առումով էլ հաճելի անակնկալներ գրանցվեցին: Աշխարհագրությունը ընդլայնվեց, որովհետեւ Հայաստան այցելեցին նաեւ Լատինաամերիկյան երկրներից»:**

**Ապրեսյանը հավելում է, որ Հայաստանում կազմակերպվում են ոչ միայն ավանդական, դասական հանգստի տեսակներ, այլեւ զբոսաշրջիկներին առաջարկվում է գյուղական, առողջապահական, ձմեռային, էկո հանգստի տեսակներ:**

Հ. Հ.

# «Հայկազուն եւ Անահիտ Վարդիվառյան» մամուլի մրցանակը՝ Հովիկ Յորդեքյանին

**Նյու Յորք-Նյու Ջերսիից Հակոբ Վարդիվառյանն արդեն շուրջ 10 տարի ֆինանսավորում է իր հիմնած մամուլի ամենամյա մրցանակները, որոնք տրվում են ՌԱԿ-ի եւ ԹՄՄիության թերթերում, ինչպես նաեւ Երեւանի «Ազգ» թերթում տպագրված լավագույն հոդվածների հեղինակներին: Այդ մրցանակներից առաջինը ՌԱԿ մամլո դիվանի պատասխանատու Հակոբ Վարդիվառյանը հաստատել էր Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի համար, իր ծնողքի՝ Հայկազուն եւ Անահիտ Վարդիվառյանների հիշատակին: Օրերս տեղեկացանք, որ 2010 թվականի մրցանակը «Զարթօնք» օրաթերթում լույս տեսած լավագույն հրապարակումների համար շնորհվել է Հովիկ Յորդեքյանին՝ իր հրապարակագրական եւ լրագրողական աշխատանքի համար:**

**Շնորհավորում ենք:**

# Կուսումնասիրվեն բանանի եւ հատիկավոր սուրճի շուկաները

**Ինչպես տեղեկացանք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, բանանի եւ հատիկավոր սուրճի շուկաներում նկատված գնային փոփոխությունների առնչությամբ հանձնաժողովը ուսումնասիրություններ է սկսել: Այս շուկաներում գործող առավել խոշոր տնտեսվարողները 5-օրյա ժամկետում պետք է տեղեկատվություն ներկայացնեն ներկրման եւ իրացման ծավալների, եւ հիմնավորումներ՝ շուկայում նկատված գնային փոփոխությունների վերաբերյալ:**

**Հանձնաժողովի մոնիտորինգի խումբն արձանագրել է, որ մանրածախ առեւտրի կետերում մարտ ամսին 1 կիլոգրամ բանանի գինը հասել է մինչեւ 1120 դրամի, այն դեպքում, երբ այս ապրանքատեսակը հունվարին վաճառվել է միջինը 840 դրամով: Հատիկավոր սուրճի դեպքում, հանձնաժողովի փորձագետների դիտարկմամբ, բարձրացել են սուրճի միջազգային գները: Ուսումնասիրությունները պետք է պարզեն, թե որքա՞ն է տեղական շուկայի գնաճը համահունչ միջազգային թանկացումներին:**

**Տեղեկացվում է նաեւ, որ հանձնաժողովի նախորդ ուսումնասիրություններով բանանի շուկայում գերիշխող դիրք ունի «Քեթրին գրուպ» ընկերությունը՝ 51 տոկոս մասնաբաժնով: Հատիկավոր սուրճի շուկայում գերիշխող է «Կաֆե դյու Բրազիլ» ընկերությունը, որի մասնաբաժինը շուկայում կազմում է 35,2 տոկոս:**

**Հանձնաժողովը հավանական է համարել, որ ուսումնասիրություններով վերոնշյալ շուկաներում ի հայտ գան նոր գերիշխողներ:** Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Նվիրատվություն Ազգային գրադարանին



Ազգային գրադարանում երեկ գիրք նվիրելու օր էր, որը կազմակերպվել էր ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում: Գրադարանի տնօրեն **Դավիթ Սարգսյանը** միջոցառման սկզբում նշեց. «Վերականգնել գիրք նվիրելու գեղեցիկ ավանդույթը նշանակում է կարեւորել գիտելիքի ու գրքի հանդեպ հավատը: Իսկ գիտելիք ձեռք բերելու լավագույն միջոցներից մեկը, կարծում եմ, գրադարանն է»:

Ազգային գրադարանին երեկ գրքեր նվիրեցին ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը, Դանիել Երաժիշտը եւ ուրիշներ: Նվիրատվությունների մեջ հատկապես հետաքրքրական էին **«Էրեբունի»** ազգային, հասարակական ու մշակութային թերթի հազվագյուտ համարները: «Էրեբունի» թերթը լույս է տեսել Լոնդոնում 1980-1996 թվականներին Թեքեյան խնամակալ մարմնի հովանավորությամբ եւ դոկտոր **Անդրեաս Ծուլիկյանի** խմբագրությամբ: Անդրեաս Ծուլիկյանը «Էրեբունի» թերթի հիմնադիրն է եւ գրադարանին թերթի ամբողջական համարներից կազմված 5 հատորների նվիրատվությունը Անդրեաս Ծուլիկյանի անձնական նախաձեռնությունն էր: Դավիթ Սարգսյանի փոխանցմամբ՝ ի սկզբանե «Էրեբունին» հրատարակվել է հայերեն, սակայն հետագայում ընթերցողական պահանջարկից ելնելով՝ հրատարակվել է նաեւ անգլերեն: «Անդրեաս Ծուլիկյանի նախաձեռնությամբ, սակայն եղբոր՝ Հակոբ Ծուլիկյանի միջոցով: Ազգային գրադարանը Հակոբ Ծուլիկյանի միջոցով է, որ այսօր հնարավորություն ունի նվեր ստանալու թերթի հազվագյուտ հատորները», հավելեց գրադարանի տնօրենը:

Մանկավարժ, թարգմանիչ եւ **«Ազգ»** օրաթերթի աշխատակից **Հակոբ Ծուլիկյանը** հանդես եկավ առանձին խոսքով ու ներկայացրեց «Էրեբունի» պարբերականը: Նրա փոխանցմամբ՝ առաջին 8 տարիներին «Էրեբունին» լույս է տեսել որպես ամսաթերթ, իսկ հաջորդ 8 տարիներին՝ որպես երկշաբաթաթերթ: Հակոբ Ծուլիկյանը նշեց, որ թերթի հավաքածու-հատորները նվիրված են իրենց ծնողներին՝ Հարություն ու Անժել Ծուլիկյաններին: Հատորներից 4-ը կազմված են հայերեն, իսկ մեկը՝ անգլերեն համարներից: «Այս համարները նվիրում ենք Ազգային գրադարանին, որպեսզի դրանք ունենան իրենց վերջնական հանգրվանն ու փրկվեն հետագա ոչնչացումից», նշեց Հակոբ Ծուլիկյանը:

«Էրեբունի» թերթի համարներից հրատարակվել են նաեւ Հայաստանում, այնուհետեւ ուղարկվել Անգլիա: Պարոն Ծուլիկյանի խոսքով՝ «Էրեբունի» թերթին օգնել է նաեւ **«Ազգ»** օրաթերթը՝ հանձին գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանի:

«Էրեբունին» եղել է Լոնդոնի Թեքեյան խնամակալ մարմնի պաշտոնաթերթը, որի խմբագիրը՝ լոնդոնաբնակ Անդրեաս Ծուլիկյանը, ծնվել է Կահիրեում 1934 թվականին, երեք եղբայրներից միջնեկն է: Ա. Ծուլիկյանը մասնագիտությամբ ոսկրաբան-վիրաբույժ է, միեւնույն ժամանակ ներգրավված է եղել ազգային-հասարակական աշխատանքներում, 1952-54 թվականներին եղել է Կահիրեի ՌԱԿ պաշտոնաթերթի աշխատակիցը, այնուհետեւ Լոնդոնի ՌԱԿ Տամասյան ակումբի վարչության անդամն ու նախագահը: Անդրեաս Ծուլիկյանը նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միության անդամ է:

Երեկվա միջոցառմանը ներկա էր նաեւ մտավորական **Վերժինե Սվազլյանը:** Նրա «Հայոց ցեղասպանություն, ականատեսների վկայություն» գրքի հրատարակմանը մեծ նվիրումով աջակցել են ե՛ւ Անդրեաս Ծուլիկյանը, ե՛ւ նրա եղբայր՝ Տիգրան Ծուլիկյանը: Վերժինե Սվազլյանը հավելեց, որ գրքի հովանավորներից մեկն Անդրեաս Ծուլիկյանն է:

Գրքերի նվիրատվությունից զատ ներկաները կարծիքներ ու մտքեր փոխանակեցին Հայաստանում գրքի հանդեպ վերաբերմունքի ու գրքափոխանակության վերաբերյալ: Պատմաբան **Գեւորգ Յազըճյանն** իր խոսքում նշեց. «Պետք է պահանջենք, որ գրքի, գրահրատարակչության, պարբերական մամուլի ու գրքափոխանակման հանդեպ պետությունը ստանձնի իր պարտականությունները»: Պատմաբան Յազըճյանի խոսքով՝ հարկավոր է բարձրաձայնել նաեւ Սփյուռքից գրականություն ու մամուլ ստանալու հարցը, Սփյուռքում հայալեզու բազմաթիվ պարբերականներ են հրատարակվում, որոնք չեն հասնում Հայաստան.«Ինչպե՞ս են համագործակցելու մեր ժողովրդի երկու կողմերը, եթե չենք կարող հաղորդակցվել մեր պարբերականների միջոցով»: Ինչեւէ, այս ուղղությամբ որոշակի քայլեր, այնուամենայնիվ, կատարվում են՝ լինի պետական, թե ոչ պետական միջոցներով: Թեքեյան կենտրոնի տնօրեն **Արմեն Ծուլիկյանը** տեղեկացրեց, որ Թեքեյան կենտրոնը նախաձեռնել է հայկական գաղութներից Հայաստան տեղափոխել գաղութների արխիվներն ու գրադարանները:

Միջոցառման վերջում ցուցադրվեց տեսաֆիլմ, որտեղ Անդրեաս Ծուլիկյանը հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության վերաբերյալ ելույթով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Որակի աստիճան բարերին, սրճարաններին, ռեստորաններին եւ առեւտրի կենտրոններին

Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ մայրաքաղաքում գործող բարերը, սրճարանները, ռեստորաններն ու առեւտրի կենտրոնները որակի աստիճան կստանան:

Առեւտրի կենտրոններին որակի աստիճաններ շնորհելու համար հաշվի կառնվեն շենք-շինություն-տարածքի, ապրանքների տեսականին, սպասարկումը, անձնակազմը, կահավորումն ու ձեւավորումը, տեխնիկական հագեցվածությունը, լրացուցիչ ծառայությունները: Բարերի, սրճարանների, ռեստորանների դեպքում որակի աստիճան շնորհելիս հաշվի կառնվեն նաեւ սպասքը, ուտեստների տեսականին: Որակի աստիճանները երկուսն են՝ «Որակի առաջին աստիճան» եւ «Որակի բարձրագույն աստիճան»: Վերոնշյալ աստիճանները կշնորհվեն երկու տարի ժամկետով: Որակի բալերը կշնորհի քաղաքապետարանը: Առեւտրի կենտրոններին որակի բարձրագույն աստիճան շնորհելու համար անհրաժեշտ է հավաքել 86-90 բալ, իսկ որակի առաջին աստիճանի համար՝ 81-85 բալ:

Հանրային սննդի պատրաստման եւ իրացման կազմակերպությունների դեպքում որակի առաջին աստիճանի համար անհրաժեշտ է հավաքել 105-109 բալ, որակի բարձրագույն աստիճանի համար՝ 110-114 բալ: Սրճարանների համար որակի առաջին աստիճանը հնարավոր է ստանալ 108-112 բալ հավաքելու դեպքում. բարձրագուն աստիճանի համար թիվը կտատանվի 113-117 սահմանում: Ռեստորանների պարագայում որակի առաջին աստիճանի համար գնահատումը կսկսվի 117-121 բալից, իսկ բարձրագույն աստիճանի համար՝ 122-126 բալ:

Այժմ վերոնշյալ որոշումը ներկայացվել է արդարադատության նախարարություն՝ պետական գրանցում ստանալու համար: Դիմումի ընդունումից հետո 30 օրվա ընթացքում կազմակերպությանը կտրվի որակավորման համապատասխան աստիճան կամ հիմնավորված մերժման դիմում: Որակի աստիճան ստանալիս կազմակերպությունները որեւէ տեսակի վճարում չեն կատարում: Որակի աստիճան ստանալու համար առեւտրի կենտրոնների, հանրային սննդի կազմակերպությունները պետք է փաստաթղթեր ներկայացնեն Երեւանի քաղաքապետին:

«**Ազգ**»-ի հետ զրույցում էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության պետ **Մեխակ Ապրեսյանի** մեկնաբանությամբ՝ բարերին, սրճարաններին, ռեստորաններին եւ առեւտրի կենտրոններին որակի աստիճան շնորհելը կօգնի սպառողներին եւ զբոսաշրջիկներին ճիշտ կողմնորոշվել: Հյուրանոցների օրինակով, վերոնշյալ կառույցներին որակի աստիճանի շնորհումը կամավորության սկզբունքով է ընթանալու: Ապրեսյանը համոզված է, որ որակի աստիճանները սպառողներին եւ զբոսաշրջիկներին ոչ միայն օգնում են ճիշտ կողմնորոշվել, այլեւ նպաստում կառույցի որակի բարձրացմանը: Նա օրինակ է բերում հյուրանոցներին որակի աստիճանների շնորհումը, որը նպաստել է ոլորտում ծառայությունների որակի բարձրացմանը: «Նման նախաձեռնությունը կօգնի, որ սպառողները ճիշտ ընտրություն կատարեն»:

Ապրեսյանը հավելում է, որ նման նախաձեռնության արդյունքում գնային սահմանումները կհստակեցվեն: «Եթե ասենք՝ բարձր որակի աստիճան ունեցող ռեստորանում սահմանված են որոշակի գներ, ապա որակի աստիճան չունեցող ռեստորանը չի կարող նույն գնով ծառայություններ մատուցել: Դա կօգնի ճիշտ գներ սահմանելու»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ

# Դեռ շատ անելիքներ կան բարենպաստ գործարար միջավայր ստեղծելու համար

*Կարծիք հայտնեց Հայաստանում ԱՄՀ-ի ներկայացուցիչ Գիերմո Տոլոսան*

**Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ներկայացուցիչ Գիերմո Տոլոսան երեկվա իր մամուլի ասուլիսը սկսեց բավականին հաջող հայերենով՝ արժանանալով ներկաների ծափահարություններին: Նա ներողություն խնդրեց ասուլիսը մեկ օրով հետաձգելու համար եւ խոստացավ հաջորդ ելույթը հայերենով կարդալ:**

**Գիերմո Տոլոսան նախ ամփոփեց ԱՄՀ-ի առաքելության Հայաստանում իրականացվող երկարաձգվող ֆինանսավորման եւ վարկավորման ծրագրերի կատարողականը, որը դրական է գնահատվել: Նա տեղեկացրեց, որ ԱՄՀ-ի կողմից 410 մլն դոլար արժողությամբ այս ծրագրերի հաջորդ ստուգումը կիրականացվի հունիսին, որից հետո կտրամադրվի այդ գումարի հերթական մասը: Այնուհետեւ Հայաստանում ԱՄՀ-ի ներկայացուցիչը ներկայացրեց մեր երկրի տնտեսության իրավիճակն ու հիմնադրամի գնահատականները:**

**Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատմամբ, Հայաստանի տնտեսությունը շարունակում է վերականգնվել ճգնաժամից, սակայն գնաճի մակարդակը բարձր է: Մարտին այն բարձրացավ մինչեւ 11,5 տոկոս: Միեւնույն ժամանակ, աճել են վարկավորման ծավալները, վերականգնվել արտաքին առեւտրի հաշվեկշիռը եւ դրամական փոխանցումները, արդյունաբերությունն ու ծառայությունները դրսեւորել են կայուն կատարողական: Ակնկալվում է, որ բարենպաստ գյուղատնտեսական տարով պայմանավորված այս տարի տնտեսական աճը կկազմի 4,6 տոկոս:**

**Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը եւ ճկուն փոխարժեքի պահպանման քաղաքականությունը, ԱՄՀ կանխատեսմամբ, գնաճը կդարձնեն չափավոր, եւ եկող տարվա առաջին կիսամյակին այն կվերադառնա ԿԲ սահմանած նպատակային միջակայք:**

**Գիերմո Տոլոսան նշեց, որ Հայաստանի կառավարության բարեփոխումների ուղղությունը ճիշտ է, բայց ընթացքի վերաբերյալ կասկածներ ունեն: Նրա հավաստմամբ, վերջին 6 ամսում եղել են լուրջ տեղաշարժեր հարկային համակարգում: Ստեղծվել է գանգատարկման հանձնաժողով հարկային կառույցից դուրս, որոշ հաշվետվություններ եւ վճարումներ ամսականից դարձել են եռամսյակային եւ այլն: Միաժամանակ, դրական գնահատելով կառավարության բարեփոխումները հարկային համակարգում, ելույթ ունեցողը նշեց, որ դեռ շատ անելիքներ կան բարենպաստ գործարար միջավայր ստեղծելու համար, եւ Հայաստանը այս առումով հետ է մնում տարածաշրջանային զարգացումների համեմատ:**

**Կառավարությունը պետք է լուրջ ուշադրություն դարձնի հարկահավաքման գործընթացին, քանի որ ՀՆԱ-հարկեր հարաբերակցությամբ մեր երկիրը ամենավերջին տեղերից է ԱՊՀ երկրներում՝ գերազանցելով միայն Տաջիկստանի ցուցանիշը: Այս ցուցանիշը 2010-ին եղել է այնպիսին, ինչպիսին 2009-ին էր: Հայաստանում գնաճի պատճառներից մեկը հանդիսացող մրցակցային միջավայրի վերաբերյալ Գիերմո Տոլոսան ասաց, որ ԱՄՀ-ն ողջունում է տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի լիազորությունների նախատեսվող ուժեղացումը: Սակայն գները վարչական մեթոդներով վերադարձնելու մոտեցումը հիմնադրամի ներկայացուցիչը անարդյունավետ համարեց, ասելով, որ դա կարող է բերել շուկան աղճատող երեւույթների:**

**«Նորարարական արտադրություններին շահութահարկի արտոնություն տրամադրելու Հայաստանի նախագահի առաջարկի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք ունի Արժույթի միջազգային հիմնադրամը» հարցին Գիերմո Տոլոսան պատասխանեց, որ հիմնադրամը չի սիրում շահութահարկի արձակուրդները, քանի որ դա լրացուցիչ ռիսկ կլինի ցածր հարկահավաքության առումով:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Մեր խորհրդարանականները մեկնաբանում են համանախագահների՝ Ստեփանակերտի օդանավակայանի մասին ասածը

**Նախորդ օրը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության՝ ԼՂՀ-ում օդանավակայանի բացման հետ կապված այն անհանգստությունը, թե թռիչքները չեն կարող փաստարկվել որպես միջազգային իրավունքով ԼՂ ներկայիս կարգավիճակի փոփոխությանն ուղղված պահանջ, բայց եւ կհանգեցնեն կողմերի մեջ լարվածության մեծացմանը, երեկ անդրադարձել են մեր խորհրդարանական ուժերի ներկայացուցիչները ԱԺ ճեպազրույցի ժամանակ: ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի կարծիքով՝ այդ հարցը համանախագահների լիազորությունների շրջանակից դուրս է, եւ դեռ կայունություն էլ չկա, որ ապակայունացնելուց են խոսում, կառուցվում է՝ պետք է շահագործվի: Ըստ ԲՀԿ խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանի՝ Լեռնային Ղարաբաղի տնտեսության զարգացումը (այդ թվում՝ Ստեփանավանի օդանավակայանի գործարկումը), ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի մյուս երկրների հետ կապերի ամրապնդումը Հայաստանի եւ մյուս երկրների հետ, ներդրում պետք է դիտել ԼՂ հակամարտության կարգավորման ուղղությամբ, այնպես որ՝ օդանավակայանի կառուցումն այս տեսակետից պետք է դիտարկել, եւ ոչ թե տարածաշրջանում իրադրությունը սրելու, ինչպես որ համանախագահներն են արտահայտվել: ՀՅԴ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արտյուշա Շահբազյանն էլ կարծում է, թե ասվածն ուղղված է ոչ թե մեզ, այլ հիմնականում ադրբեջանական կողմին. տեսել են՝ Ադրբեջանը բավական մեծ աղմուկ բարձրացրեց օդանավակայանի գործարկման առիթով, դա կապելով Արցախի անկախության ամրապնդման թեմային, հավասարակշռող հայտարարություն են արել՝ փաստորեն այս ձեւով փորձելով սիրաշահել Ադրբեջանին եւ մեղմել նրա դժգոհությունը: Ապակայունություն չի ստեղծվի այս պատճառով: Թեեւ՝ մտահոգվելու բան կա, ըստ նրա, քանի որ ադրբեջանական սպառնալիքները երբ անուժ եւ ծիծաղելի են դառնում, Ադրբեջանի ղեկավարությունը կարող է եւ ավել մեծ սադրանքների գնալ՝ մինչեւ իսկ պատերազմական գործողություններին համարժեք սադրանքների, դուրս գալու համար այն վիճակից, որի մեջ ինքն իրեն դրել է:**

Ս. Խ.

# Ուղղում

**Մեր թերթի 2011-ի ապրիլի 14-ի համարում հրապարակումներից մեկի վերնագիրը պետք է կարդալ «Վարորդական վկայականներ՝ ապօրինի վճարները գերազանցում են օրինական վճարներին», մինչդեռ թյուրիմացաբար գրվել է «Վարորդական վկայականներ՝ ապօրինի վճարները գերազանցում են անօրինական վճարներին»:**

# Ի՞նչ «ապացույցներ» են ներկայացրել

Ադրբեջանի դատախազությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին է «ներկայացրել Ֆարիզ Բադալովի սպանության գործով ձեռք բերված ապացույցներ»: Իսկ այդ երկրի ԱԳՆ մամլո խոսնակը, «մեկնաբանելով» Սլովենիայի մայրաքաղաքում նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը, ասել է. «Եվրոպական ինտեգրման մասին խոսում է Հայաստանը, մի երկիր, որը տառացիորեն օրերս է հաստատել իր հավատարմությունը քաղաքացիական բնակչության դեմ բռնության քաղաքականությանը՝ արտոնելով ադրբեջանցի իննամյա տղայի՝ Ֆարիզ Բադալովի սպանությունը»:

Դե, իհարկե, եթե «ապացույցները ձեռք են բերվել եւ ներկայացվել ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին, այդ մասին արդեն կարելի է բարձրաձայնել»:

Խնդիրն այն է, թե ի՞նչ «ապացույցներ» կարող էր ձեռք բերել Ադրբեջանի դատախազությունը:

Հայտնի միջադեպին հաջորդած ավելի քան մեկ ամսում ադրբեջանական կողմն այդ առթիվ տարածել է միայն մեկ տեղեկատվություն: Ըստ այդմ, «մարտի 27-ին գտնվել է այն գնդակը, որից զոհվել է Ֆարիզ Բադալովը»:

Նախ, ինչո՞ւ Ֆարիզ Բադալովի մահվան պատճառ դարձած գնդակը «հայտնաբերվել է» դեպքից շուրջ 20 օր հետո: Չէ՞ որ «երեխան սպանվել է, երբ խաղալիս է եղել իրենց տան բակում»՝ ինչպես ասված է պաշտոնական հաղորդագրության մեջ: Դատախազության քննիչները դեպքի օրն «սպանության վայրի» տեղազննում չէի՞ն կատարել: Եթե չէին կատարել, ապա ինչո՞ւ: Իսկ եթե կատարել էին, ինչո՞ւ չէին հայտնաբերել չարաբաստիկ գնդակը: 20 օր հետո քննչական նոր գործողությո՞ւն է նշանակվել: Եթե այո, ապա՝ ի՞նչ հիմքով: Դատախազությունն ի՞նչ խնդիր է առաջադրել քննիչ-փորձագետներին: Եվ նրանք ի՞նչ հանգամանքներում եւ որտե՞ղ են գտել Ֆարիզ Բադալովին խոցած գնդակը:

Երկրորդ, եթե նույնիսկ «գնդակը հայտնաբերվել է», ապա ինչի՞ց են ադրբեջանցի քննիչները եզրակացրել, որ «արձակվել է «օկուպացված» Չիխլար գյուղից»: Գնդակի վրա հատուկ նշում կա՞, որ «հայկական է»:

Երրորդ, հնարավո՞ր է, որ դեպքից այդքան երկար ժամանակ անց «հայտնաբերված գնդակը» ենթարկվի փորձաքննության: Ադրբեջանն ունի՞ այդ կարգի փորձաքննություն անցկացնելու տեխնիկական եւ մասնագիտական հնարավորություններ:

Եվ վերջապես՝ այդքան աղմկահարույց գործով նախաքննություն եւ մանավանդ քննչական հատուկ գործողություններ անցկացնելիս ադրբեջանական կողմն ինչո՞ւ չի ներգրավել նաեւ միջազգային անկախ փորձագետների:

Մինչ անհիմն մեղադրանքներ առաջադրելը, թվում է, ադրբեջանական կողմը պարտավոր էր տալ այս եւ այլ հարցերի տրամաբանված-հիմնավորված պատասխանները:

Բայց մենք դասում ենք օրինաչափորեն: Իսկ ադրբեջանական կողմի մոտեցումներն առհասարակ օրինաչափության շրջանակներից դուրս են: Ինչ-որ մեկն էլ, ահա, պատրաստվում է «Ֆարիզ Բադալովի սպանության հարցը բարձրացնել Եվրոխորհրդարանում»:

Ակնհայտ է, թե ինչու: Եվրոխորհրդարանը վերջերս մի բանաձեւ է ընդունել, որով Եվրամիությանը հորդորել է ուղղակի երկխոսություն սկսել միջազգայնորեն չճանաչված պետական կազմավորումների հետ:

Ադրբեջանում, ինչպես միշտ, նախ փորձեցին նենգափոխել այդ բանաձեւը: Իսկ երբ դա չհաջողվեց, այժմ էլ որոշել են Բրյուսելի ուշադրությունը հրավիրել «հայ դիպուկահարի կողմից իննամյա ադրբեջանցի երեխայի սպանության փաստին»:

Այս ամենից, անկեղծ ասած, տպավորություն է ստեղծվում, որ անմեղ երեխայի մահը խիստ անհրաժեշտ էր հենց ադրբեջանական կողմին: Որպեսզի պայմանավորվածություններից հետ կանգնելու առիթ լինի: Որպեսզի Իլհամ Ալիեւի աշխատակազմի ներկայացուցիչ Ալի Հասանովը ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին «սպառնալու հիմքեր ունենա»:

Ո՞րն է «խաղի իմաստը»: Ադրբեջանի արտաքին քաղաքական քայլերն առհասարակ տրամաբանության չեն տրվում: Այդուհանդերձ, Ալի Հասանովի խոսքերից կարելի է եզրակացնել, որ բավական անմխիթար վիճակում հայտնվելով, Իլհամ Ալիեւը որոշել է «վճռական գրոհ ձեռնարկել եւ ճնշում գործադրել» միջնորդների վրա:

Բայց դա, ըստ երեւույթին, ոչ այնքան արտաքին, որքան «ներքին սպառման ապրանք է»: Այն է՝ հասարակությանը ցույց տալ, որ «իշխանությունն այնքան ուժեղ է, որ նույնիսկ գերտերությունների հետ է խոսում վերջնագրի լեզվով»: Մյուս կողմից էլ դա, ամենայն հավանականությամբ, միջազգային հանրությանը հասցեագրված մեսիջ է, որպեսզի նա ադրբեջանական ընդդիմությանը չաջակցի:

Այսպիսով, կամա, թե ակամա, Իլհամ Ալիեւը «երկրորդ ճակատ է բացում»՝ Ադրբեջանի «ազգային շահերին թշնամի» հռչակելով միջազգային հանրությանը՝ ի դեմս ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների:

Ֆարիզ Բադալովի հանգամանքն այստեղ ընդամենը «գործիք» է, որ Իլհամ Ալիեւը միջնորդների հետ շփումներում «ճնշման լծակ» ունենա:

Հասկանո՞ւմ են դա միջնորդները: Ամեն դեպքում, նաեւ մեր խնդիրն է օգնել, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն իրենց համար կարողանան պարզել, թե ինչու Ադրբեջանը համառորեն հրաժարվում է պարտավորություն ստանձնել, որ խնդրի կարգավորումը դուրս է ուժային բաղկացուցիչ տիրույթից:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Տոկիոյի համալսարանի հայ պրոֆեսոր Կոնստանտին Սարկիսովը՝ հետերկրաշարժյան Ճապոնիայի մասին



Հայտնի քաղաքագետ, Տոկիոյի Յամանաշի Գակույին համալսարանի պրոֆեսոր **Կոնստանտին Սարկիսովը** Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժից մեկ օր հետո՝ մարտի 12-ին Մոսկվայից Տոկիո թռչող ավիաուղեւորների թվում էր: Նա չէր կարող եւ չէր ուզում ոչ մի գնով հետաձգել Տոկիոյի համալսարանում վաղուց նշանակված դասախոսությունը:

Պրոֆեսոր Սարկիսովն այսօր Ճապոնիայում ապրող եզակի հայերից է, որի անունը տասնամյակներով կապված է եղել այդ երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության հետ: Հեղինակ է ճապոներենով եւ անգլերենով հրատարակված բազմաթիվ գրքերի, հոդվածների, գիտական աշխատությունների: Աշխարհի հեղինակավոր ամբիոններից հանդես է գալիս ռուս-ճապոնական քաղաքական ներկա խնդիրների վերաբերյալ դասախոսություններով, իր հոդվածներում բազմիցս անդրադարձել է Պորտսմուտի պայմանագրին եւ Ռուսաստանի ու Ճապոնիայի միջեւ խաղաղ համաձայնության խնդրին: Քաղաքագետը ծնվել է Երեւանում, դպրոցական տարիներն անցկացրել Բաքվում, ավարտել Սանկտ Պետերբուրգի համալսարանի ճապոնական բանասիրության բաժինը: Երկար տարիներ եղել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կից, Եվգենի Պրիմակովի ղեկավարած արեւելագիտության ինստիտուտի փոխնախագահը: Ռուսաստանի ճապոնագետների ընկերակցության առաջին նախագահն է:

Նրա հետ զրույցը տեղի է ունեցել սկայպով, ու թույլ հոսանքի պատճառով նրա աշխատասենյակում տիրող կիսախավարը մի պահ երեւանյան ճգնաժամային անցյալի ծանոթ պատկերն էր հիշեցնում: Նա պատմում էր, որ Ճապոնիան տարերային աղետների շատ է ենթարկվել իր պատմության ընթացքում, 1923 թվականի երկրաշարժի հետեւանքով 150 հազար ճապոնացի է զոհվել: Այս երկրաշարժի եւ նրա հետեւանքների զոհերի թիվը հասնում է 30 հազարի: Սարկիսովը պատմում է ճապոնացիների հետերկրաշարժյան կենցաղի մասին: Հոսանք չլինելու պատճառով գնացքները շատ դեպքերում չեն աշխատում, սակայն երկարաձիգ հերթերում կանգնած մարդիկ, որոնք սպասում են գնացք նստելու իրենց հերթին, միմյանց չեն հրմշտում, հերթը չեն խախտում, շատ բարձր կարգապահություն է: Նույն պատկերն է բրինձ կամ այլ կարգի օգնություն ստանալու պահերին. ճապոնացի մարդու մեջ նստած կարգապահությունը նրան վստահություն է տալիս, որ եթե այս պահին իրեն ոչինչ չհասավ, մի փոքր ուշ անպայման հասնելու է: Նա մտավախություն չունի, թե պահեստի հետեւից ինչ-որ մեկն առանց հերթի կարող է ինչ-որ բան ստանալ: Եթե շատ հազվադեպ որեւէ մեկը կարգ է խախտում՝ նա հասարակական պարսավանքի է ենթարկվում: Երեւի բնական տարերքները հաղթահարելու ճապոնացու տոկունությունը նաեւ ճապոնական հասարակության ծայր աստիճանի կազմակերպվածության եւ հասարակական վարքի դրսեւորման արդյունք է:

Կոնստանտին Սարկիսովը նաեւ պատմեց, որ Ճապոնիայում նա շատ քիչ հայերի է հանդիպում, հայկական համայնք, որպես այդպիսին չկա, բայց կան խառնամուսնական ընտանիքներ, երբ կինը կամ ամուսինը հայ է. «Ես իմ դասախոսությունների ընթացքում ուսանողներին պատմում եմ նաեւ Հայաստանի եւ հայերի մասին: Ցավոք՝ հայերեն վարժ չեմ խոսում, սակայն հպարտ եմ իմ ծագմամբ եւ աշխատում եմ հնարավորինս շատ այցելել Հայաստան», ասում է նա:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նյու Յորք

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# «1937-38 թթ. Դերսիմի իրադարձությունները համարժեք են ցեղասպանության».

## *«Հարցը կներկայացվի ՄԱԿ-ին առընթեր Միջազգային քրեական դատարան»*

**Քեմալականների իթթիհասական ծագումն ու օսմանյան ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը Հայոց ցեղասպանության չուսումնասիրված հարցերից է: Ժառանգականության պարագայում խնդիրը սոսկ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մերձակա շրջապատը կազմող հայ ազգի դահիճները, հայերի բնաջնջման երիտթուրքերի քաղաքականությունը շարունակելու քեմալականների հետեւողականությունը, նորաստեղծ Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների հետ պետության հարաբերությունները հայկական հարցում իթթիհասականների կիրառած բնաջնջման այդ նույն սկզբունքով կարգավորելու մոտեցումը չէ, ոչ էլ հայերի հետ նաեւ ասորիներին ու հույներին ցեղասպանության ենթարկելը, այլ Դերսիմի կոտորածները, որոնք իրագործվել են 1937-38 թթ.:**

**Այլ կերպ, եթե հայերի, հույների, ասորիների պարագայում քեմալականները շարունակում էին իթթիհասական ցեղասպան քաղաքականությունը, ապա Թունջելի վերանվանված Դերսիմի կոտորածները նրանց ինքնուրույն նախաձեռնությունն էր: Ի դեպ, թուրքական պատմագրության մեջ իբրեւ ապստամբություն հիշատակվող այս իրադարձությունները թուրք պետական գործիչներից առաջինը կոտորած է անվանել վարչապետ Էրդողանը:**

**Թեեւ նա դրանով բուռն հակազդեցություն է առաջ բերել ինչպես ընդդիմության, այնպես էլ երկրի քաղաքական շրջանակներում, սակայն հարցի վերարծարծման պատճառ է դարձել, նպաստելով դրա վերանայման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը:**

**Թերեւս դրանով պետք է պայմանավորել հարցի առնչությամբ Դերսիմում ուսումնասիրություններ կատարելու եւ դա Միջազգային քրեական դատարան ներկայացնելու նախաձեռնությունը, որպեսզի Դերսիմի իրադարձությունները եւս ճանաչվեն իբրեւ ցեղասպանություն: Նախաձեռնող խմբի մեջ են ամերիկացի փաստաբան, պրոֆ. Բերրի Ֆիշերն ու Հրանտ Դինքի ընտանիքի դատապաշտպան Էրդալ Դողանը: Ինչպես ապրիլի 12-ին նշել էր «Ռադիկալ» թերթը, այս հանձնախումբն օրերս ուղեւորվել է Դերսիմ, հանդիպել է 1937-38 թթ. իրադարձությունների ականատեսներին եւ ուսումնասիրություններ է կատարել այն վայրերում, որտեղ իրականացվել են զանգվածային կոտորածները:**

**Դողանն ասել է**, որ Դերսիմի իրադարձությունները համարժեք են ցեղասպանության, հարցը Միջազգային քրեական դատարան ներկայացնելու համար թուրք փաստաբան Էրեն Քեսքինի եւ ամերիկացի փաստաբան Ֆիշերի հետ համատեղ աշխատանքներ են ծավալվում, հավաքվում են փաստեր եւ գրառվում ականատեսների վկայությունները:

Բերրի Ֆիշերն ավելացրել է, որ 1937-38 թթ. իրադարձությունները բնույթով չափազանց ողբերգական են եղել, ցավոք, առ այսօր ոչ ոքի չի հետաքրքրվել դրանով: Այնուհետեւ նա ընդգծել է. «Եղել եմ այն վայրերում, որտեղ զանգվածաբար ոչնչացրել են կանանց, երեխաներին, տղամարդկանց: Ես այնտեղ ցավոք չտեսա զոհվածների հիշատակին նվիրված որեւէ հուշարձան, ոչ էլ լսեցի որեւէ խոսք իրադարձությունների մասին: Այդպիսի իրավիճակ ստեղծվել էր նաեւ հրեաների ցեղասպանությունից հետո: Ինձ վրա ծանր տպավորություն է թողել իրադարձությունների լռության մասնվելը: Ականատեսները 80-90 տարեկան են: Թեեւ նույն բանը կատարվել է նաեւ հրեաների հետ, սակայն Թուրքիայում բնակվող ժողովուրդների համար կարեւոր է պատմության վերաիմաստավորումն ու վկայությունների գրառումը: Այլապես ականատեսները կմեռնեն, որից հետո այլեւս վկա չի մնա»:

Պրոֆ. Ֆիշերը հույս է հայտնել, որ վերստին կայցելի Դերսիմ, եւ հարցը մանրամասն քննարկելու նոր առիթ կունենա: Նա հնարավոր է համարել հարցին տարաբնույթ մոտեցումների ցուցադրումը եւ խոսել է կոտորածներին մասնակից պետական որոշ գործիչների դեմ Միջազգային քրեական դատարան հայցը ներկայացնելու հավանականության մասին:

Նա ասել է. «Սպանված կանայք, երեխաներն ու տղամարդիկ ո՛չ գրոհային են եղել, ո՛չ էլ որեւէ սպառնալիք են ներկայացրել Թուրքիայի Հանրապետության բանակի համար: 1937-38 թթ. իրադարձությունները որպես ցեղասպանություն բնութագրելու հարցում կան տարբեր կարծիքներ: Սակայն դա տեխնիկական խնդիր է: Ինձ համար կարեւորը ոչ թե իրադարձությունների բնութագրումն է, այլ դրանց մասին ճշմարտությունը: Դերսիմում իրականացված զանգվածային կոտորածները, բնակչության բռնի տեղահանումը, տեղանունների փոփոխությունը կամ մայրենի լեզվի օգտագործման արգելումը բազմաթիվ առումներով ավելի են, քան մշակույթի եւ էթնիկ խմբավորումների ոչնչացումը»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ցեղասպանության բանավոր պատմությանը նվիրված կոնֆերանս

Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի հումանիտար առարկաների շենքի դահլիճում ապրիլի 2-ին կայացել է կոնֆերանս նվիրված Հայոց ցեղասպանության բանավոր պատմությանը, կազմակերպությամբ համալսարանի հայոց արդի պատմության ամբիոնի եւ բանավոր պատմության ուսումնասիրության կենտրոնի եւ հովանավորությամբ Բոբ եւ Նորա Մովել, Սուրեն եւ Վերգինե Փափազյան հիմնադրամների, ինչպես նաեւ Մերձավորարեւելյան կենտրոնի:

Կանադայում, Մեքսիկայում եւ Մ. Նահանգներում հայոց բանավոր պատմության հավաքածուներ պահպանած կենտրոնների ներկայացուցիչներ հավաքվել են այդ օրը՝ քննարկելու դրանք հասարակությանը առավել մատչելի դարձնելու ուղիները:

Ըստ «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի՝ կոնֆերանսի առավոտյան նիստին մասնակցել են Մարկ Մամիկոնյանը, Վարուժան Ֆրունջյանը, Բեթել Բիլեզիքյան-Չարխուդյանը, Ջորջ Շիրինյանը, Թաներ Աքչամը, Գրեգ Սարգսյանը, Հայկ Տեր-Մանվելյանը: Առավոտյան մյուս՝ «տեսողական արվեստներ» խորագիրը կրող նիստին մասնակցել են Կառլա Կարապետյանը, Ջերի Փափազյանը, Դոնալդ եւ Լոռնա Թուրյան-Միլլերը, Արա Օշականը եւ Բիանկա Բահադուրյանը: Երեկոյան նիստին («Պահպանում, ինդեքսավորում, արխիվացում եւ մատչելիություն») մասնակցել են Սթիվն Սմիթը (Շոա հիմնադրամի տնօրեն), Թերեզա Բառնեսը (Կալիֆոռնիայի համալսարանի բանավոր պատմության ուսումնասիրության կենտրոն), Հայկ Դեմոյանը (Երեւանի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն) եւ Մարկ Գրինբերգը (Հարավային Ֆլորիդայի բանավոր պատմության համալսարանի տնօրեն):

«Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրով 17 կոնֆերանսներ եւ ցեղասպանությանը նվիրված 4 համագումարներ անցկացնելուց հետո գոհունակությամբ ողջունում եմ բանավոր պատմությանը նվիրված այս կոնֆերանսի անցկացումը, որը կարեւոր եմ համարում ամենատարբեր բնագավառների (հասարակագիտության, քաղաքագիտության, տնտեսագիտության, հումանիտար առարկաների, Սփյուռքի ուսումնասիրության եւ այլն) համար:

Մենք պետք է կարողանանք պահպանել եւ մատչելի դարձնել բոլոր լսողա-տեսողական այդ ժապավեններն ու փաստագրական տվյալները», նշել է այդ առթիվ պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը:

Հ. Ծ.

# Իրո՞ք այդքան վատն է Քադդաֆին

Համաշխարհային մասշտաբի որեւէ իրադարձություն մեծ քաղաքականությունից հեռու մարդուն ներկայանում է առավելապես իր արտաքին տեսքով եւ նվազ մատչելի է կամ առավելապես բնավ էլ հասու չէ իր խորքային շարժառիթներով ու ենթատեքստերով: Էլ չենք ասում, որ ամեն մի երկիր երեւույթին նայում է սեփական պատկերացումներով՝ իր շահերի տեսանկյունից: Համենայն դեպս արաբական երկրներում ու մասնավորապես Լիբիայում տեղի ունեցող իրադարձությունների ռուսաստանյան ոչ լիբերալ մեկնաբանությունները էապես տարբերվում են արեւմտյան մոտեցումներից:

Ինչպես միշտ, ներկա ծավալուն ու շռնդալից բեկումները եւս առաջին հերթին այստեղ դիտվում են որպես վերազգային համաշխարհային ուժերի աշխարհանվաճ ծրագրերի իրականացման հերթական փուլ: Գերկառավարություն անվանված այդ մարմինը գլոբալ ցանցերի տեսքով միավորում է մոլորակի քաղաքական, ֆինանսական ու տեխնոլոգիական հզոր կառույցներ, որոնք, կապված չլինելով որեւէ կոնկրետ պետության հետ, հենվում են անձնական շահերի ու ապրելակերպի ընդհանրության վրա: Բնական ռեսուրսների համար մղվող անողոք պայքարի ավանդական պատկերացումների հետ մեկտեղ առկա է վերադարձը նորատեսակ գաղութատիրության գաղափարին, երբ պատերազմներ են հրահրվում անմիջականորեն տարածքներ վերահսկելու համար՝ այդ ռեսուրսները տնօրինելու նպատակով: Եվ այստեղ էլ հառնում են մեծ եւ փոքր պետությունների ողբերգական հարաբերությունները ի վնաս վերջինների:

Բայց ինչու այս պահին ռազմական թիրախ դարձավ հենց Լիբիան: Նավթից բացի, թվում է, շատ բան պայմանավորված է արեւմտյան լրատվամիջոցներում «ցնցած ազգասպանի» կերպարանք ստացած Մուամմար Քադդաֆիի անձի անընդունելիությամբ: Մինչդեռ ռուսաստանի շատ մեկնաբաններ նրան ներկայացնում են որպես մի քաղաքական գործչի, որը հսկայական ծառայություններ ունի իր ազգի առջեւ: Նրա կառավարման տարիներին լիբիացիների թիվը մեկ միլիոնից հասել է վեցի: Առողջապահությունն անվճար է, ընդ որում հիվանդանոցներն ապահովված են նորագույն բուժտեխնիկայով: Անվճար է նաեւ կրթությունը. ընդունակ երիտասարդները հնարավորություն ունեն սովորելու արտասահմանում՝ պետության հաշվին: Լիբիացիները չեն վճարում նաեւ էլեկտրականության համար: Ամուսնացող զույգը ստանում է մոտ 50000 դոլարի նյութական օգնություն: Պետական վարկերը անտոկոս են եւ ըստ էության անժամկետ: Բենզինն ու հացը գրեթե ձրի են: Գյուղատնտեսությամբ զբաղվողները ազատված են բոլոր հարկերից: Պետական դոտացիաների շնորհիվ ավտոմեքենաները մատչելի են բոլոր ընտանիքներին եւ այլն (հայաստանցիները երեւի նախանձից նվաղեցին, հատկապես նորապսակները): Համաձայնենք, որ իր ազգին սիրող ղեկավարը միայն կարող է մտածել նրա մասին:

Ահա եւ, նավթադոլարների մի զգալի մասը թողնելով իր երկրի ներքին կարիքների, սոցիալական ոլորտի համար, այսինքն, ինչ-որ տեղ կիսելով ժողովրդի հետ, Քադդաֆին արեւմտյան ֆինանսական համակարգին զրկում է միլիարդավոր դոլարների տրսկումներից: Ռուսներն այստեղ նրան համեմատում են իրենց օլիգարխների հետ, որոնք յուրացնելով հատկապես բնական հարստությունները, ստացած եկամուտների հիմնական մասը փոխադրում են հենց եվրոպական թե ամերիկյան բանկեր, էապես հզորացնելով նրանց: Աշխարհում տեղ չպիտի գտնի ոչ մի «սոցիալիզմ», եթե նույնիսկ կոչվում է «ջամահարիական»:

Վերադառնանք, սակայն, գերկառավարության գոյությանը՝ առնչված նշյալ աշխարհաշրջանային փոփոխություններին: Ռուս մասնագետները, ի դեպ, թարմացրել են ինչպես նրա անվանումը՝ գլոբալ կառավարող դասակարգ, այնպես էլ նրա ներկա աշխարհասփյուռ քայքայիչ գործունեության բնորոշումը: Եթե այդ ստրատեգիան մինչ այդ կոչվել էր «կառավարելի քաոս», ապա դրա որակական նոր մակարդակը ձեւափոխվել է արդեն «ոչ կառավարելի քաոսի»: Ստեղծելով քաոսային իրավիճակներ ընդարձակ աշխարհատարածքներում, հնարավորություն է ստեղծվում թրի մի հարվածով ձեռք գցելու իշխանություն եւ հարստություն ու կտրուկ փոխելու մեծ հանրակցությունների զարգացման ընթացքն ու տրամաբանությունը, ինչն էլ տեսնում ենք արաբական աշխարհում:

Եվս մի պարագա, որ խիստ մտահոգում է Ռուսաստանին՝ ինչ չափով արաբական հեղափոխությունները կազդեն երկրի մուսուլմանաբնակ տարածաշրջանների վրա: Բանն այն է, որ այստեղ չեն թաքցնում իրենց անհանգստությունը «Մուսուլման եղբայրներ» կրոնական եւ «Ալ Ղաիդա» ահաբեկչական կազմակերպությունների հետ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի համագործակցության, ավելի կոնկրետ՝ վերջիններիս կողմից նրանց ցույց տրվող ռազմական աջակցության կապակցությամբ: Արձանագրվում է, որ Քադդաֆիի հակառակորդների միջուկը կազմում են արմատական իսլամիստները եւ «Ալ Ղաիդայի» գրոհայինները: Ընդ որում, խռոված արաբական երկրներում առաջինները պատրաստակամություն են հայտնում մասնակցելու նոր իշխանությունների կազմավորմանը: Մինչդեռ գաղտնիք չէ, թե իսլամական ֆունդամենտալիստները ինչպես էին ֆինանսապես աջակցում եւ ռազմական ու ահաբեկչական գործողություններին անմիջականորեն մասնակցում չեչենական պատերազմներում:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Հնարավոր է, որ պաղեստինցիները դիմեն ՄԱԿ-ին՝ անկախությունը ճանաչելու պահանջով

Հենց սկզբից նշենք, որ պաղեստինցիներն այս իրավունքն ունեն: Այսպես. ՄԱԿ-ի կանոնադրության 3-րդ գլխի («Կազմակերպության անդամները») 4-րդ հոդվածը սահմանում է՝ «ՄԱԿ-ը բաց է բոլոր այն խաղաղասեր պետությունների առջեւ, որոնք որպես պարտականություն կվերցնեն սույն կանոնադրության բովանդակությունը եւ որոնք ցանկանում են եւ կարող են այդ պարտավորությունները կիրառել»: Իսկ որ Պաղեստինը «ուզում է եւ կարող է այդ պարտավորությունները» կիրառել, երեկ «ՌԻԱ Նովոստի»-ի կենտրոնական գրասենյակում հայտարարել է Մոսկվայում Պաղեստինի դեսպան Ֆաեդ Մուստաֆան: Ընդգծելով, որ Պաղեստինի անկախության ճանաչումը բխում է նաեւ Իսրայելի շահերից, քանի որ «միայն այդ պարագայում է հնարավոր խաղաղությունը Մերձավոր Արեւելքում», դեսպանը նշել է. «Եթե առաջիկա ամիսների ընթացքում իսրայելա-պաղեստինյան հակամարտության լուծման գործընթացում լուրջ տեղաշարժեր չգրանցվեն, ապա առաջիկա սեպտեմբերին մենք կդիմենք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա՝ պահանջով ճանաչել Պաղեստինի անկախությունը»: Դեսպան Մուստաֆան կարծիք է հայտնել, որ «հաշվի առնելով միջազգային հարաբերություններում պաղեստինցիների վերջին ժամանակներում ունեցած հաջողությունները, Գլխավոր ասամբլեայի մեծամասնությունը կաջակցի պաղեստինցիներին»: «Չի կարելի այս հարցը հետաձգել կամ կախվածության մեջ գցել այլ հարցերից», նշել է դիվանագետը: Մուստաֆան, շեշտելով, որ «Պաղեստինի անկախությունը պետք է ճանաչվի 1967-ի սահմաններով», նշել է. «Միայն անկախության ճանաչումից հետո հնարավոր կլինի լուծել հարցերի «այլ փաթեթ». օրինակ, ջրային ռեսուրսների տնօրինումը, փախստականների վերադարձը, սահմանագծերի հստակեցումը եւ այլն: Ուզում եմ ընդգծել, որ պաղեստինցիները՝ տնտեսապես, քաղաքականապես պատրաստ են ստեղծել սեփական պետականությունը»: Պաղեստինցի դիվանագետը նաեւ նշել է, որ հարցի նման կերպ բարձրացումը ՄԱԿ-ում իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը «նոր տոնայնություն կտա». «Կառաջանա նաեւ Իսրայելի կողմից անկախ Պաղեստինի պետության որոշ տարածքների օկուպացիայի հարցը», նշել է դեսպանը:

«Պաղեստինի 1967-ի սահմանների միջազգային ճանաչում» նշանակում է ճանաչել Պաղեստին պետությունը՝ Հորդանան գետի արեւմտյան ափը, Գազայի հատվածը եւ Արեւելյան Երուսաղեմը ներառյալ: Վերջինս, ի դեպ, պաղեստինցիները ցանկանում են տեսնել որպես իրենց պետության մայրաքաղաք: Մինչդեռ Իսրայելը Երուսաղեմը հայտարարել է արդեն երկրի «հավերժ եւ անքակտելի մայրաքաղաք» եւ հրաժարվում է պաղեստինցիների հետ քննարկել Արեւելյան Երուսաղեմի հարցը:

Ինչեւէ, դեսպան Մուստաֆայի հայտարարության մեջ հետաքրքրական է մեկ այլ հանգամանք եւս: Այսպես, մարտի վերջին Պաղեստինի առաջնորդ Մահմուդ Աբբասը հայտարարեց, որ ինքը նախատեսում է հասնել Պաղեստինի պետության միջազգային ճանաչմանն արդեն այս տարվա սեպտեմբերին: Ավելին, ինքը՝ ԱՄՆ-ի նախագահ Օբաման ավելի վաղ հայտարարեց. «Ես կցանկանայի արդեն այս սեպտեմբերին տեսնել անկախ Պաղեստինի պետության ստեղծումը»: Այս ամենն, անշուշտ, խոսում է Մուստաֆայի նշած՝ «միջազգային հարաբերություններում պաղեստինցիների ունեցած հաջողությունների» մասին, ինչն առայժմ այս մակարդակով չի կարելի ասել մեկ այլ չճանաչված պետության՝ ԼՂՀ-ի մասին, որն, ի դեպ, սեփական անկախության միջազգային ճանաչման պահանջով եւս կարող է դիմել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա:

**Հ. ԱՓՅԱՆ**

ՈՉ ԱՎԵԼ, ՈՉ ՊԱԿԱՍ...

# ՌԴ գերագույն մուֆթին առաջարկում է զինանշանի վրա մահիկ ավելացնել

**Ռուսաստանի մուսուլմանների կենտրոնական հոգեւոր վարչության գերագույն մուֆթի Թալգատ Թաջուդդինը առաջարկել է ՌԴ զինանշանի վրա մահիկ ավելացնել որպես իսլամի խորհրդանշան: Համապատասխան հայտարարություն է արվում «Մոսկովսկիե նովոստի» թերթին նրա տված հարցազրույցում:**

**Թաջուդդինի կարծիքով, մահիկը խաչին պետք է փոխարինի երկգլխանի արծվի գլուխներից մեկը պսակող թագի վրա: Նաեւ առաջարկվում է մահիկ (կիսալուսին) ավելացնել զինանշանի կենտրոնական թագի խաչին: «Այդ դեպքում ոչ մի թշնամի չի կարողանա կրոնական գործոնը կիրառել ի վնաս մեր հայրենիքի միասնության եւ ամբողջականության», պնդում է մուֆթին:**

**Թաջուդդինը մահիկավոր զինանշանի էսքիզներն արդեն ուղարկել է տարածաշրջանների գլխավոր մուֆթիներին: Նա պատմել է, որ իր առաջարկությունն արդեն ուղարկել է վարչապետ Վլադիմիր Պուտինին, ինչպես նաեւ գաղափարը հայտնել է նախագահ Դմիտրի Մեդվեդեւին:**

**Թեեւ Թաջուդդինը խաչերն անվանում է «ուղղափառ», ոչ 2000-ի օրենքում, ոչ էլ դրա 1993 թ. տարբերակում չի խոսվում զինանշանի թագերի վրայի խաչերի կրոնական նշանակության մասին: Երկու դեպքում էլ թագերը նկարագրված են որպես «Պետրոս Մեծի երեք պատմական թագեր»:**



# Մինսկի մետրոյի ահաբեկչին գտել են հեռախոսազանգով

**Բելառուսի քննիչները Մինսկի մետրոյում պայթեցում իրականացրած անձին գտել են բջջային հեռախոսի զանգի միջոցով: Այդ մասին տեղեկացնում է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը:**

**Պայթուցիկ սարքը գործի դնելուց առաջ ահաբեկիչը զանգել էր բջջային հեռախոսով: «Օկտյաբրսկայա» կայարանի դիտարկման տեսախցիկները գրանցել են հանցագործի արարքները: Տեսագրությունն ուսումնասիրելիս քննիչները բջջային օպերատորների միջոցով պարզել էին, թե որ համարներից են զանգահարել ահաբեկչության պահին: Այդ տեղեկությունների շնորհիվ բացահայտվել է հանցագործի ինքնությունը:**

**Տեսագրությունների շնորհիվ նաեւ պարզվել է, որ կասկածյալն ապրում է մետրոյի «Ֆրունզենսկայա» կայարանի շրջանում: «Կոմսոմոլսկայա պրավդայի» տվյալներով, նա այնտեղ բնակարան էր վարձել իր մտերմուհու եւ ընկերոջ հետ, որը նույնպես կասկածյալ է:**

**Մետրոյի «Օկտյաբրսկայա» կայարանում պայթյունը տեղի էր ունեցել ապրիլի 11-ի երեկոյան: Պայթյունի զոհերի թիվը երեկ հասավ 13-ի, հիվանդանոցներում բուժվող վիրավորների թիվը 161 է: Նրանցից 21-ի վիճակը ծանր է:**

**Ահաբեկչություն իրականացրած անձը Վիտեբսկի 25-ամյա բնակիչ է: Պայթյունից առաջ նա զանգել էր հիշյալ մտերմուհուն:**

**Ապրիլի 13-ին ձերբակալված 5 կասկածյալներից 3-ին (այդ թվում ահաբեկչի մտերմուհուն) հարցաքննությունից հետո ազատ են արձակել: Ենթադրյալ ահաբեկիչը եւ նրա հանցակիցը դատարանի վճռով ձերբակալված են: Բելառուսի ուժային կառույցները հաղորդում են, որ երկուսն էլ արդեն խոստովանել են որոշ բաներ: Ենթադրյալ ահաբեկիչը նաեւ խոստովանել է, որ ինքը Բելառուսում պայթյուններ է կազմակերպել 2005-ին եւ 2008-ին:**

# Արեւմուտքի գործողությունը կշարունակվի մինչեւ Քադդաֆիի տապալումը

**Լիբիայում ռազմական գործողությունը կշարունակվի այնքան ժամանակ, մինչեւ որ Մուամմար Քադդաֆին թողնի երկրի ղեկավարությունը: Այդ մասին հայտարարել են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ղեկավարները՝ Բարաք Օբաման, Դեւիդ Կեմերոնը եւ Նիկոլա Սարկոզին: Համատեղ հայտարարությամբ նրանք նաեւ խոստացել են շարունակել Լիբիայի խաղաղ բնակչության պաշտպանության գործողությունը, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Ֆրանսպրեսն ավելացնում է, որ երեք ղեկավարները նաեւ «անիմաստ» են համարել Քադդաֆիի հետագա պաշտոնավարումը:**

**Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան եւ ԱՄՆ-ը առաջնորդում են միջազգային կոալիցիան, որի օդուժը եւ ծովուժը ՄԱԿ-ի ԱԽ թույլտվությամբ մարտի 19-ին ռազմական գործողություն սկսեցին Լիբիայի դեմ: Երեք երկրների ուժերը հրթիռակոծում եւ ռմբակոծում են Լիբիայի հակաօդային պաշտպանության օբյեկտները, ինչպես նաեւ կառավարական զորքերի դիրքերը: Մարտի 31-ից դաշնակիցների գործողությունները ղեկավարում է ՆԱՏՕ-ն:**

**Լիբիայի վերաբերյալ մարտի 17-ին ՄԱԿ-ի ԱԽ-ում ընդունված բանաձեւը թույլատրում է ռազմական միջամտություն երկրի քաղաքացիական բնակչության պաշտպանության նպատակով: Ռազմական գործողությունների առաջին շաբաթներին կոալիցիոն ուժերը ընդգծում էին, թե Լիբիայի վարչակարգի տապալումը իրենց ծրագրի մեջ չի մտնում:**

**Ապրիլի 14-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը հայտարարեց, որ Լիբիայում ռազմական գործողությունը կշարունակվի «այնքան, որքան անհրաժեշտ է»: Ավելի վաղ նա կոալիցիայի անդամ երկրներին կոչ էր արել հավելյալ օդանավեր տրամադրել դաշինքին:**

**Դարձյալ ապրիլի 14-ին ԱՄՆ օդուժը վերսկսեց Լիբիայի ռմբակոծությունը, չնայած ապրիլի 4-ին հայտարարվել էր, թե ամերիկյան օդանավերն այլեւս չեն մասնակցում գործողությանը:**

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Ոտանավորներ

## ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

### ՄԵԾԵՐԻ ՍՐՃԱԽՄՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐԵՐԻ ԱՉՔՈՒՄ

*Հավաքվում են սեղանի շուրջ*
*Եվ խմում են ծովի չափ սուրճ:*
*Ովքե՛ր, ովքե՛ր են նրանք,*
*Մեր մեծերն են չափազանց լուրջ:*

*Հետո բաժակն են շուռ տալիս,*
*Հետո բախտ են գուշակում լուրջ,*
*Հավատում են ամեն խոսքի,*
*Կյանքն համարում հրաշք կամ փուչ:*

*Էլի խմում ծովի չափ սուրճ,*
*Պտտվում են սեղանի շուրջ,*
*Մեզ են անվերջ դասեր տալիս*
*Մեր մեծերը չափազանց լուրջ:*

*Երբ կողքից ես նայում նրանց*
*Կամ էլ վերից, վարից կամ էլ,*
*Ծիծաղելի են չափազանց*
*Եվ թվում են սրճից հարբած:*

*Ինչ լավ է, որ սուրճ չեն խմում,*
*Կաթ են խմում փոքրիկները,*
*Կյանքը նրանց լույս է թվում,*
*Կաթի պես տաք՝ մարդկանց սերը:*

### ԼԻԼԻՊՈՒՏԻ ՏՆԱԿՈՒՄ

*Լիլիպուտն իր տնակում*
*Հաց է դրել պնակում,*
*Թե մի պահ աչքը թեքի,*
*Հացից ոչինչ չի գտնի:*
*Որովհետեւ տնակում*
*Ով ասես չի բնակվում,*
*Էլ այծ, էլ արջ եւ մի ուղտ,*
*Եվ բոլորն էլ լիլիպուտ:*
*Բայց ախորժակ ունեն, հա՛,*
*Ասես մարդ են աժդահա:*

### ՖՈՒՏԲՈԼԻՍՏ ՋՈՆ

*Կար մի ֆուտբոլիստ,*
*Անունը՝ Ջո,*
*Նա շատ էր սիրում*
*Տաք լահմաջո:*
*Այնքան էր ուտում,*
*Որ փորը բաց*
*Քսվում էր դաշտի*
*Խոտերին թաց:*
*Մի օր մարզիչը*
*Չհամբերեց.*
*- Ջո՛, դու մարզի՞կ ես,*
*Թե՛ ցնփոր էծ:*
*Ջոն իբր տխրեց,*
*Նստեց. -Հաջո՛ղ:*
*Գնաց խժռելու*
*Տաք լահմաջո:*

### ԻԾՈՒԿ-ԲԻՁՈՒԿԸ

*Մի էծ է նա ծերացած,*
*Իծուկ-բիձուկ են ասում,*
*Եղջյուրները երկարած*
*Մինչեւ ամպերն են հասնում:*
*Իսկ մորուքը սպիտակ*
*Ոտքերի տակ է ընկնում,*
*Ոչխարի հոտն անփանակ*
*Նրա հետքով է գնում:*
*Հովիվն էլ է հարգում շատ,*
*Եվ գայլերն էլ, ով զարմանք,*
*Բղավում են հիացած՝*
*Իծուկ-բիձուկ, քեզ փառք, փառք:*

### ԳՐՈՂ ՎՀՈՒԿԸ

*Վհուկ կը գրեց երեք հատոր գիրք,*
*Երեքի մեջ էլ չկար ոչ մի միտք:*
*Բա ի՞նչ էր այդքան լցրել նրանց մեջ,*
*Միայն փուչ մտքեր, մտքեր՝ հեզից հեզ:*
*Այսինքն՝ դատարկ, այսինքն՝ քամի,*
*Այդպես գրողին գրողը տանի:*

**«Գրական թերթ», 1 ապրիլ 2010**

# Ի՞նչ անել...

*Հարգելի խմբագրություն.*

Երբ 1982 թվականին «Սովետական գրող» հրատարակչությունը լույս ընծայեց Էդ. Միլիտոնյանի «Գնելը դպրոցում» մանկական գրքույկը եւ այստեղ կարդացինք, թե ինչպես էր «սղասում ձմեռ տատը, ձմեռ պապուն», շատ զարմացանք տատուն, պապուն բառերի վրա, առանց հասկանալու, որ բանաստեղծը, մեր՝ ընթերցողներիս հայերենի իմացությունից 29 տարի առաջ է ընկել:

Առաջադեմ լինելու փաստն ավելի առկա դարձավ, երբ վերջին տարիներին տատուն, պապուն, էտի, էսի, զանգվենք, վիճվենք եւ այլ նորամուծություններ թափանցեցին մեր խոսքի մեջ:

Ս.թ. ապրիլի 1-ին, «Գրական թերթը» տպագրեց Էդ. Միլիտոնյանի «հանճարեղ» բանաստեղծությունների մի շարք, մանուկների ու պատանիների համար, որոնցից մեկը չէր կարող քննարկման առարկա չդառնալ, քանի որ նորից, ոչ հեռաստես ու իբր ճաշակ ունեցողներս, նույնիսկ կարծեցինք, թե խոտան է սա, բայց գիտակ խմբագիրները բացատրեցին, մեկնաբանեցին միամիտներիս, ասելով.

Ո՞վ է Ջոն, վստահաբար, ամերիկացի:

Ի՞նչ անել, գովե՞լ ամերիկացուն այն դեպքում, երբ ԱՄՆ-ը մտել է Իրաք, Աֆղանստան, բա Կոսովո:

Քաղաքականապես ճիշտ չի լինի պարսավել Ջոյին, դա նշանակում է մոռանալ, որ այդ երկրում մեկ միլիոն հայ է ապրում: Ուրեմն ի՞նչ անել, դիմել ֆուտբոլային դիվանագիտությա՞նը. Ջոյին դարձնել ֆուտբոլիստ, նրան շատ չսեւացնել, իսկ հարկ եղած դեպքում արդարանալ ու ասել, որ Ջոյի չաղլիկ ու ցնփոր լինելն ապացույցն է ԱՄՆ-ի կյանքի բարձր կենսամակարդակի:

Ինչ վերաբերում է «հաջողին», դա բնական է, ամերիկացին ինչպես պետք է ասի ցը՜տե՜սու՜թյո՜ւն, «հաջողը» կարճ է եւ այսօրվա հայերենին ավելի հարիր:

Իսկ ինչո՞ւ լահմաջո, միայն հանգը պահելու համար: Ո՛չ...

Պարզվում է, որ դա շատ միամիտ ու մակերեսային բացատրություն է, իրականում, եթե անդրադառնում ենք ԱՄՆ-ին, քաղաքականապես ճիշտ չի լինի անտեսել արաբական աշխարհը, այն էլ այս օրերին: Ուրեմն նրա սիրտն էլ շահենք լահմաջոյով:

Հանճարեղ, ունիկալ, հասուն, հեռատես, հեռահար, իսկ մենք միամիտ ընթերցողներս միայն մակերեսն ենք տեսնում (Ջո-լահմաջո), տողատակը չենք հասկանում: Արաբներին գնահատելով մենք էլ մեր տուրքը տանք.

*Տատիկն Էրիկի, հաճախ էր եփում*
*Չիլա, ղավուրմա.*
*Եվ տղան սիրեց ուտել շաուրմա...*

Զարմանում եմ, խմբագիրը ինչպե՞ս չի ամաչել նման բան տպել, այն էլ «Գրական թերթում», այն էլ մանուկների համար:

Եթե հեղինակը «Աստծո թելադրանքով» չի կարողացել բանաստեղծական այդ հեղեղը թղթին չտալ, իսկ ձեզ ի՞նչ հեղեղ, ցուցամի՛ է ստիպել տպագրել այդ ալիմիան:

Եթե մանուկն այդքան հեշտ է տպում խոտանը, ապա խնդրեմ տպեք այս «գոհարը».

*Կար, չկար մի գեր Էրիկ կար,*
*Այդ գեր Էրիկի ասած չկար,*
*Նա խաշ էր ուտում, առանց ասամի*
*Ու ախորժակով խմում էր գինի:*
*Մի օր Էրիկը քնից արթնացավ,*
*Աչքերը բացեց ու շատ զարմացավ,*
*Իր գրչի վրա մի բոլ աշխատեց,*
*Մի քանի անգամ պարգեւատրվեց:*
*Նա երջանկացավ,*
*ուրախ անսահման,*
*Եվ շուտով մեկնեց նա*
*արտասահման:*
*Երբ ներկայացավ Էրիկ Միլիտոն,*
*Առաջնորդեցին հյուրանոց*
*«Հիլտոն»:*

Եթե չտպագրեք, պատճառաբանեք, թե ինչով է պակաս «Իծուկ-բիձուկից» կամ «հավաքվում ենք սեղանի շուրջ, եւ խմում ծովի չափ սուրճ»...

**ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

**Խմբ. կողմից.- Նույնիսկ մեծագույն բանաստեղծները սովորություն ունեն բառերի ու հանգերի հետ խաղ անել, պարզապես որպես «պրոֆեսիոնալ» ժամանց: Բայց երբեք, երբեք դրանք չեն հանձնում թղթին, էլ ուր մնաց տպագրության: Էդ. Միլիտոնյանը մեր լավ գրողներից է, գրական կարեւոր գործիչ, հրատարակչական գործի մասնագետ: Հետեւաբար զարմանալի է, որ մեկ-մեկ չի կարողանում դիմադրել փորձությանը, եւ ոչ միայն թղթին, այլեւ թերթին է հանձնում «պարապ վախտի խաղալիք» մտոտումներ: Ցավալի է: Վերեւում «Գրական թերթից» արտատպվող ոտանավորները համարե՞նք ապրիլմեկյան կատակ:**

# Վարչապետը՝ խմբագրական խորհրդի նախագահ

ՀՀ վարչապետ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) խորհրդի նախագահ, տնտեսագիտության թեկնածու, Տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտոր Տիգրան Սարգսյանը ընտրվել է Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության եւ հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ:




Օրերս լույս է տեսել 2011 թվականի առաջին համարը: Ամսագրում հոդվածներ են ներկայացրել միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ աշխարհի առաջատար երկրների ԲՈՒՀ-երից եւ գիտակրթական կենտրոններից: Խմբագրական կազմում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս անդամ Գեւորգ Բրուտյանը, Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դ. Ն. Ուզնաձեի հոգեբանության ինստիտուտի տնօրեն Իրակլի Իմեդաձեն, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Մոսկվայի պետական հոգեբանա-մանկավարժական համալսարանի սարիֆային հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լյուդմիլա Օբուխովան, ՌԴ Պետական հումանիտար համալսարանի մարքեթինգի եւ գովազդային գործունեության վարչության պետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դմիտրի Շեւչենկոն, Բռնոյի Մասարիկ համալսարանի թանգարանագիտության եւ ժառանգության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (Չեխիա) Յան Դոլակը եւ այլք:

Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդեսը հավակնություն ունի դառնալ միջազգային ամսագիր, քանի որ խմբագրական խորհրդի անդամները տարբեր երկրների գիտնականներ են:

Գիտական հանդեսը երաշխավորվել է տպագրության միջբուհական կոնսորցիումի Բուհերի ռեկտորների խորհրդի եւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի կողմից:

2011 թ. լույս տեսնող առաջին իսկ համարից սկսած ժողովածուն կտեղադրվի ՀՊՄՀ-ի ինտերնետային կայքում:

***ՀՊՄՀ Լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն***

# Ֆիլհարմոնիկ նվագախումբը մանկավարժական համալսարանում

Երեկ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար Էդվարդ Թոփչյանի ղեկավարությամբ, հյուրընկալվեց Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Պրոֆեսորադասախոսական կազմի եւ ՀՊՄՀ ուսանողների համար ֆիլհարմոնիկ նվագախումբը կատարեց Մոցարտի թիվ 40 Սիմֆոնիան: Համերգի ընթացքում երիտասարդ երգչուհի Հասմիկ Թորոսյանի կատարմամբ հնչեց նաեւ Մոցարտի «Ալելուա» ստեղծագործությունը:

Վերջում Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբությունը դահլիճում ներկա բոլոր Շուշանիկների համար կատարեց հայ ժամանակակից կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի «Շուշանիկ» քնարական պատկերը:

Ուսանողների բուռն ընդունելության եւ դրսեւորած հետաքրքրության արդյունքում Էդվարդ Թոփչյանը ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին խոստացավ դասական երաժշտության համերգները հայկական պետական մանկավարժական համալսարանում դարձնել ավանդական:

***ՀՊՄՀ Լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն***

# Վիլիամ Սարոյանին նվիրված միջոցառումի տարի Հունաստանում

**Հունահայ արվեստի գործիչները հույն հասարակությանը ներկայացրեցին միջազգային ճանաչում ունեցող, մեծանուն գրող՝ Վիլիամ Սարոյանին**

**«ԻՄ ԱՆՈՒՆՆ Է ՍԱՐՈՅԱՆ»**

Հույն-Ամերիկյան միությունն ու Աթենքում ՀՀ դեսպանությունը, Հունա-հայկական ուսումնասիրության կենտրոնի հետ համագործակցությամբ, 2011 թ. ընթացքին կազմակերպելու են միջոցառումների շարք՝ մեծանուն գրող Վիլիամ Սարոյանի մահվան 30-րդ տարելիցին նվիրված:

Միջոցառումների առաջինը կայացավ ապրիլի 13-ի երեկոյան, Հույն-Ամերիկյան միության լեփ-լեցուն թատերասրահում: Հունահայ արվեստի գործիչներ՝ Նազիկ Այտինյանը, Հայկ Գասարճյանը, Էլենի Քասսեսյանը եւ Լորանս Մենենցյանը ընթերցեցին եւ արտասանեցին Սարոյանի աշխատություններից՝ հայկական հեքիաթները, հույն հասարակությանը ներկայացնելով միջազգային ճանաչում ունեցող գրողին, երաժիշտներ՝ Մկրտիչ Պողոսյանի (ուդ) եւ Լեֆտերիս Հավուցասի (կիթառ) ընկերակցությամբ:

# «Բիբլիոբուսը» այցելեց Կոտայքի մարզ

Արդեն մի քանի տարի է, որ Հայաստանին Ֆրանսիայի կառավարության կողմից նվիրաբերած «Բիբլիոբուսը» շրջում է հանրապետության մարզերում, գրասերներին ծանոթացնում է նոր հրատարակությունների հետ եւ նաեւ գրադարաններին տրամադրում գրականություն:

Ազգային գրադարանի «Բիբլիոբուսը» (գրքերի շարժական ավտոբուս) այսօր կայցելի Կոտայքի մարզ: **«Ազգը»** տեղեկացավ Ազգային գրադարանի գրքափոխանակության եւ զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Ալիս Ադամյանից, որ ավելի քան 300 միավոր գրականություն կտրամադրվի մարզի Չարենցավանի, Հրազդանի, Աբովյանի, Սոլակի, Ալափարսի, Աղավնաձորի, Կարենիսի, Մեղրաձորի, Արզականի քաղաքային, մարզային եւ գյուղական գրադարաններին: Տրամադրվող գրականության թվում են գեղարվեստական, պատմական, ուսուցողական եւ այլ տեսակի գրականություն: Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակում մարզային գրադարանները գրեթե չեն համալրվել, բոլորը կարիք ունեն աջակցության ու համալրման:

«Գրքի շաբաթ» միջոցառումների շարքը շարունակվում է, եւ Ազգային գրադարանն այն կամփոփի ապրիլի 26-ին «Բիբլիոբուսի» այցը Սյունիքի մարզ: Այդ օրը Կապանի, Գորիսի, Մեղրիի գրքասերները կծանոթանան նոր հրատարակված գրքերի հետ, իսկ գրադարանները կհարստանան նոր նվիրատվություններով:

Տեղեկացան, որ տարվա ընթացքում այցելություններ կլինեն Արարատի, Վայոց ձորի, Արմավիրի մարզեր: Բոլոր մարզերի գրադարաններին կտրամադրվի գրականություն: Անցած տարի «Բիբլիոբուսի» միջոցով մարզերի 50 գրադարաններին տրամադրվել է 5 հազար 329 միավոր գրականություն:

**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

# Ցուցահանդես՝ նվիրված Երկիր մոլորակի միջազգային օրվան

Այսօր նշվում է Երկիր մոլորակի օրը: Այդ առիթով ՄԱԿ-ի գրասենյակի ցուցասրահում կբացվի հայ գեղանկարիչներ Լիլիթ Սողոմոնյանի եւ Գագիկ Ղազանչյանի նկարների ցուցահանդեսը: Ինչպես տեղեկացանք ՀՀ մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սոնա Հարությունյանից, ցուցահանդեսին ներկայացված են 60 աշխատանքներ, որոնցում հատուկ տեղ է հատկացվել Երկիր մոլորակին ու անտառների պահպանման խնդրին:

Ցուցահանդեսը կբացվի ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւայի բացման խոսքով, նաեւ Սոնա Հարությունյանի ողջույնի խոսքով: Ցուցահանդեսին հրավիրվել են մեր երկրում դիվանագիտական կորպուսի աշխատակիցներ, միջազգային կազմակերպությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

**Ս. Ս.**

# Արայիկ Միրզոյանին զրկեցին չեմպիոնի տիտղոսից



Կազանում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնության հերթական օրը հաջող էր Հայաստանի պատվիրակների համար: Մինչեւ 77 կգ քաշային կարգում Արայիկ Միրզոյանը շատ մոտ էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին: Սակայն մրցավարների կողմնակալության պատճառով նա զրկվեց ուժեղագույնի տիտղոսից եւ բավարարվեց արծաթե մեդալով: Երկամարտում հայ ծանրորդը ցույց տվեց 347 կգ (160+187) արդյունք: Նույնպիսի արդյունքով չեմպիոն հռչակվեց թուրք Սեմիհ Յագչին, որն անձնական քաշով 260 գրամով թեթեւ էր Միրզոյանից: Սակայն թուրք ծանրորդին չեմպիոն դառնալուն օգնեցին մրցավարները, որոնք հաշվեցին նրա 3-րդ մոտեցումը հրում վարժությունում: 192 կգ-անոց ծանրաձողը հրելիս թուրք ծանրորդն ակնհայտ խախտում թույլ տվեց` ծալելով ծնկները: Սակայն մրցավարները հաշվեցին փորձը եւ Յագչին փաստորեն Արայիկից գողացավ ոսկե մեդալը:

Մինչեւ 77 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրին Արայիկ Միրզոյանն ու Աղասի Աղասյանը: Միրզոյանը պոկում վարժությունը սկսեց 155 կգ-ից, ապա 3-րդ մոտեցմամբ բարձրացրեց 160 կգ: Աղասի Աղասյանն էլ 2 հաջող փորձ կատարեց` հաջորդաբար բարձրացնելով 148 եւ 153 կգ: Իսկ ահա 3-րդ մոտեցմամբ նա 155 կգ-ը չբարձրացրեց:

Միրզոյանի արդյունքը պոկում վարժությունում լավագույնն էր: Նա արժանացավ փոքր ոսկե մեդալի: Արծաթե մեդալը բաժին հասավ ալբանացի Էրկան Քերիմեյին (157 կգ): 155 կգ արդյունքով բրոնզե մեդալ նվաճեց թուրք Սեմիհ Յագչին:

Հրում վարժությունը Միրզոյանը սկսեց 183 կգ-ից: 2-րդ մոտեցման ժամանակ նա չբարձրացրեց 187 կգ-ը, սակայն 3-րդ փորձը հաջող էր: Իսկ թուրք ծանրորդը հաջորդաբար բարձրացրեց 181, 188 եւ 192 կգ-անոց ծանրաձողերն ու հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: Միրզոյանը փոքր արծաթե մեդալ նվաճեց հրում վարժությունում: Բրոնզե մեդալը երկամարտի 340 կգ (155+185) արդյունքով նվաճեց ռումինացի Ալեքսանդրու Ռոսուն:

Աղասի Աղասյանը փորձելով հետ բերել պոկում վարժությունում կորցրածը, հրում վարժության համար պատվիրել էր շատ բարձր քաշ` 190 կգ: Հաջողության դեպքում նա նվազագույնը բրոնզե մեդալակիր կդառնար: Սակայն Աղասյանին այդպես էլ չենթարկվեց ծանրաձողը: Նա 0 ստացավ:

Մինչեւ 85 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրեց Էդգար Գեւորգյանը: Պոկում վարժությունում նա միայն առաջին մոտեցումը հաջող կատարեց` բարձրացնելով 165 կգ: Հաջորդ մոտեցումների ժամանակ նրան չենթարկվեց 170 կգ-անոց ծանրաձողը: Էդգարը 170 գրամ ավելի անձնական քաշի պատճառով բրոնզե մեդալը զիջեց Իսրայելը ներկայացնող Անատոլի Մուշիկին:

Հրում վարժությունում պատմությունը կրկնվեց: Գեւորգյանը առաջին մոտեցմամբ բարձրացրեց 185 կգ, իսկ 201 կգ ծանրությունը հաղթահարել չհաջողվեց: Այսպիսով, Էդգար Գեւորգյանը երկամարտի 350 կգ արդյունքով գրավեց 7-րդ տեղը: 385 կգ արդյունքով չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Ալեքսեյ Յուֆկինը, որն անձնական քաշով ավելի թեթեւ էր նույնպիսի արդյունքի հասած իր հայրենակից Ապտի Այխադովից:

Մինչեւ 63 կգ քաշային ծանրորդուհիների մրցավեճում Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսի համար հիմնական պայքարն ընթացավ ռուսաստանցիներ Մարինա Շաինովայի եւ Սվետլանա Ցարուկաեւայի միջեւ: Ոսկե մեդալի բախտը վճռեց մարզուհիների անձնական քաշը: 250 գրամ ավելի թեթեւ քաշի շնորհիվ երկամարտի 245 կգ (104+141) արդյունքով ոսկե մեդալակիր դարձավ Մարինա Շաինովան: 2-րդ տեղը նույնպիսի ցուցանիշով գրավեց Սվետլանա Ցարուկաեւան: 3-րդ տեղը գրավեց թուրք Սիբել Սիմսեկը` 238 կգ (108+130):

Մինչեւ 69 կգ քաշային ծանրորդուհիների մրցավեճում լավագույնը ռուսաստանցի Օքսանա Սլիվենկոն էր` 265 կգ (120+145): 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Տատյանա Մատվեեւան` 251 կգ (110+141): Բրոնզե մեդալը նվաճեց հունգարուհի Էսթեր Կրուտզլերը` 231 կգ (104+127):

# Պորտուգալիան արդեն ապահովել է տեղը եզրափակիչում

**Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի կիսաեզրափակիչի մասնակիցները: Պատվավոր մրցանակի համար պայքարը կշարունակեն պորտուգալական 3 թիմերն ու իտալական «Վիլյառեալը»: Այնպես որ արդեն այժմ կարելի է փաստել, որ եզրափակիչում Պորտուգալիան նվազագույնը մեկ ներկայացուցիչ կունենա: Ապրիլի 28-ին կայանալիք կիսաեզրափակիչ առաջին խաղում կմրցեն «Բենֆիկան» ու «Բրագան», «Պորտոն» ու «Վիլյառեալը»: Պատասխան հանդիպումները կկայանան մայիսի 5-ին:**

**Ինչպես եւ չեմպիոնների լիգայի մրցաշարում, Եվրոպայի լիգայի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումներում թիմերից երեքը գործնականում ապահովել էին հաջորդ փուլի ուղեգիրը: Եվ պատասխան հանդիպումներում մրցակիցներին չհաջողվեց ռեւանշի հասնել: Մոսկվայի «Սպարտակը» առաջին խաղում «Պորտոյին» 1-5 հաշվով զիջելուց հետո, սեփական հարկի տակ էլ խոշոր հաշվով (2-5) պարտություն կրեց: «Վիլյառեալն» էլ Իսպանիայում «Տվենտեին» ջախջախելուց հետո (5-1) հաղթեց նաեւ հյուրընկալվելիս (3-1): Հոլանդական «Էյնդհովենին» չհաջողվեց սեփական հարկի տակ պարտության մատնել «Բենֆիկային», որին զիջել էր 1-4 հաշվով: Արդեն 25-րդ րոպեին հոլանդացիները խաղը շահում էին 2-0 հաշվով: Սակայն նրանց ոչ միայն չհաջողվեց խփել այնքան անհրաժեշտ 3-րդ գնդակը, այլեւ 2 գոլ բաց թողեցին, ու խաղն ավարտվեց ոչ-ոքի` 2-2:**

**Միակ ինտրիգը պահպանվել էր Կիեւի «Դինամոյի» եւ «Բրագայի» մրցավեճում: Կիեւում խաղն ավարտվել էր ոչ-ոքի` 1-1, ընդ որում դաշտից հեռացվել էր Անդրեյ Շեւչենկոն: Նա չմասնակցեց պատասխան հանդիպմանը: Սեփական հարկի տակ «Բրագան» արդեն 29-րդ րոպեին մնացել էր 10 հոգով, սակայն դինամոյականներին չհաջողվեց իրացնել թվային առավելությունը: Դարպասները մնացին անառիկ: «Բրագան» մրցակցի հարկի տակ խփած գոլի շնորհիվ մտավ հաջորդ փուլ:**



# Մաֆիան գողացել էր Մարադոնայի «Ոսկե գնդակը»

Իտալական մաֆիայի պարագլուխներից մեկը` Սալվատորե Լո Ռուսոն պատմել է, որ Դիեգո Մարադոնան ժամանակին դիմել է իրեն օգնելու հետ վերադարձնելու գողացված «Ոսկե գնդակ» մրցանակը: Այն Մարադոնան ստացել էր որպես 1986-ի աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ:

Մաֆիայի պարագլուխը փորձել է գտնել «Ոսկե գնդակը», սակայն պարզվել է, որ մրցանակն արդեն ձուլվել ու դարձել է ոսկու կտոր: «Ոսկե գնդակի» փոխարեն Սալվատորեն Մարադոնային է հանձնել գողացված 4 ժամացույց: Սակայն դրանցից մեկը Դիեգոն հետ է վերադարձրել, քանի որ իրենը չէր:

Թմրանյութերի համար ձերբակալված Սալվատորեն նաեւ պատմել է, որ «Նապոլիում» խաղալու ժամանակ ինքը Մարադոնայի կոկաին է վաճառել:

# Կարոլին Վոզնյացկու 15-րդ տիտղոսը

Դանիացի թենիսիստուհի Կարոլին Վոզնյացկու հաղթանակով ավարտվեց թենիսի միցաշարը Չարլսթոնում, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 721 հազար դոլար էր: Եզրափակիչում Վոզնյացկին պարտության մատնեց ռուսաստանցի Ելենա Վեսնինային (6-2, 6-3):

Թենիսիստուհիների դասակարգման ցուցակի առաջատարը մարզական կարիերայում իր 15-րդ տիտղոսը նվաճեց: Այդ հաղթանակի համար նա պարգեւատրվեց 111 հազար դոլարով եւ ստացավ վարկանիշային 470 միավոր:

**ՇԱԽՄԱՏ**

# ՀՀ հավաքականը կմասնակցի աշխարհի թիմային առաջնությանը

**Armchess.am-ի տեղեկացմամբ շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականը կմասնակցի հուլիսի 15-26-ը Չինաստանի Նինբո քաղաքում կայանալիք աշխարհի թիմային առաջնությանը: Բացի Հայաստանի հավաքականից, աշխարհի թիմային առաջնությունում հանդես կգան նաեւ Չինաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Իսրայելի, Հունգարիայի, Ադրբեջանի, Հնդկաստանի, ԱՄՆ-ի եւ Եգիպտոսի ընտրանիները:**

**Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Արշակ Պետրոսյանը թիմի կազմում ընդգրկել է Լեւոն Արոնյանին, Սերգեյ Մովսիսյանին, Վլադիմիր Հակոբյանին, Գաբրիել Սարգսյանին եւ Ռոբերտ Հովհաննիսյանին: Նշենք, որ Սերգեյ Մովսիսյանն այդ մրցաշարում նորամուտը կնշի Հայաստանի հավաքականում:**

# Խորեն Գեւորը որակազրկվեց 6 ամսով

**Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Խորեն Գեւորը Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտից հետո ռինգի մրցավարին հարվածելու համար 6 ամսով որակազրկվել է: Նա նաեւ պարտավոր է Գերմանիայի բռնցքամարտի ֆեդերացիային 5100 եվրո տուգանք վճարել:**

**«Հաշվի առնելով, որ Գեւորը մինչ այդ աչքի է ընկել լավ վարքագծով ու ներողություն է խնդրել մրցավար Կյուխլերից, վերջինիս վրա հարձակումը ֆեդերացիան դիտարկում է որպես հավասարակշռության խախտում: Հույս ունենք, որ Խորենը հասկացել է իր սխալը եւ զղջում է կատարվածի համար: Ուստի ֆեդերացիան սահմանափակվեց 6-ամսյա որակազրկմամբ ու դրամական տուգանքով», նշել է Գերմանիայի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Թոմաս Պյուտցը:**

# Անաստասյանն էլ «սայթաքեց»

Դուբայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեցող Աշոտ Անաստասյանն անդրանիկ պարտությունը կրեց` սեւերով զիջելով Եվգենի Միրոշնիչենկոյին:



5 տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Տիգրան Քոթանջյանը, որը հաղթելով Սուրենդրանին, վաստակեց 4 միավոր: Տուրը հաղթական էր նաեւ Վլադիմիր Հակոբյանի համար, որը պարտության մատնեց Ռոբերտ Արելանոյին: Հակոբյանը վաստակեց 3,5 միավոր: Նույնպիսի արդյունք ունեն նաեւ Դավիթ Պետրոսյանը, Դավիթ Հարությունյանը, Զավեն Անդրեասյանը, Կարեն Գրիգորյանը, Արտաշես Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը:

Անդրեասյանը հաշտություն կնքեց Պոնտուս Կառլսոնի հետ, Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց Յուրի Կուզուբովի հետ, Արտաշես Մինասյանն էլ միավորը կիսեց Սամեր Մանսուրի հետ պարտիայում: Դավիթ Հարությունյանը հաղթեց Աննա Զոզուլիային:

Տուրն անհաջող էր Սամվել Տեր-Սահակյանի համար, որը պարտվեց Վերոնիկա Շնեյդերին: Սամվելն ունի 3 միավոր: 2,5 միավոր վաստակած Հովիկ Հայրապետյանն էլ սպիտակներով պարտվեց Լեւան Պանցուլայային: 3 միավոր վաստակեց Գեւորգ Հարությունյանը` առավելության հասնելով Նոման Օմարի նկատմամբ:

5 տուրից հետո աղյուսակը 4,5-ական միավորով գլխավորում են Կրիշնան Սասիկիրանը, Պարիմարջան Նեգին եւ Միխեիլ Մչեդլիշվիլին: Սասիկիրանը հաղթեց Սթելիոս Հալկիասին, Մչեդլիշվիլին պարտության մատնեց Սերգեյ Վոլկովին, իսկ Նեգին հաշտություն կնքեց Յաբա Բալոգի հետ:

# ՌՖՄ-ն կդիմի ՀՖՖ-ին

Ռուսաստանի ֆուտբոլային միությունը (ՌՖՄ) պատրաստվում է դիմել ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիային մարտի 26-ին կայացած ընտրական մրցախաղից առաջ իրավապահ մարմինների գործողությունների առիթով: Հիշեցնենք, որ Ռուսաստանից ժամանած մոտ 100 ֆուտբոլասերների թեեւ տոմսերի առկայությանը, չէին թույլատրել մտնելու մարզադաշտ, պատճառաբանելով, թե ռուսներին հատկացված տրիբունայում արդեն տեղ չկա:

«Ռուսաստանի ֆուտբոլասերների նկատմամբ կիրառված անվտանգության միջոցառումները, ստուգումներն անհիմն ու անմտածված բնույթ են կրել եւ չեն բխել ՈՒԵՖԱ-ի անվտանգության ապահովման պահանջներից», նշել է Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Ալեքսեյ Տարասենկոն:

Ինչ վերաբերում է Մոսկվա-Երեւան ինքնաթիռում ռուս ֆուտբոլասերների հրահրած անկարգություններին, ապա նրանց նկատմամբ քրեական գործ է հարուցված:

# Մարտիրոսյան-Ռոման մենամարտը կկայանա հունիսի 4-ին

**Ինչպես հայտնի է, ապրիլի 23-ին առաջին միջինքաշային կարգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը ապրիլի 23-ին պետք է մենամարտեր Սաուլ Ռոմանի հետ: Սակայն Վանեսը հիվանդացել է գրիպով եւ չի հասցնի վերականգնվել մինչեւ մենամարտը: Այդ պատճառով մենամարտը հետաձգվել է եւ կկայանա հունիսի 4-ին Լոս Անջելեսում:**

**Հիշեցնենք, որ Վանես Մարտիրոսյանն առայժմ անպարտելի է պրոֆեսիոնալ ռինգում: Նա շահել է բոլոր 29 մենամարտերը: Սաուլ Ռոմանը 42 մենամարտից 34-ում է հաղթել, 8 անգամ ռինգը թողել է պարտված:**

# Պայմանագրերը լուծարվեցին

«Փյունիկի» սերբ դարպասապահ Դորդե Պանտիչն ու «Շիրակի» բելգիացի հարձակվող Բենջամին Կաբոնգոն շատ կարճ ժամանակ հանդես գալով Հայաստանում, հեռացան հայկական ակումբներից: Երկուսի հետ էլ փոխադարձ համաձայնությամբ պայմանագրերը լուծարվել են:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Samsung Galaxy Tab-ը Orange խանութներում՝ հատուկ սակագնային ղլաններով



Երեւան, 15 ապրիլի, 2011թ: Orange-ը ներկայացնում է Samsung Galaxy Tab պլանշետային համակարգիչը հատուկ մշակված սակագնային պլաններով: Գնելով այս պլանշետային համակարգիչը եւ բաժանորդագրվելով առաջարկվող չորս սակագնային պլաններից մեկին՝ Orange-ի բաժանորդները ոչ միայն կստանան բացառիկ պայմաններ պլանշետի ձայնային եւ կարճ հաղորդագրությունների հնարավորություններից օգտվելու համար, այլ նաեւ մեկ տարվա ընթացքում կստանան ամսական 250-ից 1000 ՄԲ անվճար ինտերնետ թրաֆիկ՝ կախված ընտրված սակագնային պլանից:

Այս թեթեւ ու բարակ պլանշետային համակարգիչը, որն ընդամենը 380 գրամ է, կարելի է օգտագործել ինչպես 2G, այնպես էլ 3G (HSDPA 7.2) ցանցերում եւ ունի նաեւ wi-fi հնարավորություն: Samsung Galaxy Tab-ը աշխատում է Android 2.2 օպերացիոն համակարգով, ունի ինտեգրված Google ծառայություններ ու սոցիալական ցանցեր եւ ի հավելում բազմաթիվ այլ ֆունկցիաների՝ նաեւ ներկառուցված GPS:

Samsung Galaxy Tab-ը կարելի է ձեռք բերել Orange-ի խանութներում 329,000 դրամով, նաեւ՝ ապառիկ: Orange-ն այն առաջարկում է 1 տարվա երաշխիքով եւ հետվաճառքային սպասարկմամբ: Ավելին, հատուկ վերապատրաստված տեխնիկական մասնագետների կողմից Orange-ի վաճառքի կետերում բաժանորդներին տրամադրվում է սարքի հիմնական ֆունկցիաների վերաբերյալ նախնական անվճար խորհրդատվություն:

Առաջարկվող սակագնային պլանների մասին մանրամասները կարելի է գտնել www.orangearmenia.am կայքում:

Samsung Galaxy Tab-ի մասին ավելին իմանալու համար այցելեք http://www.samsung.com/uk/galaxytab/ կայքը:

## Թեքեյան մշակութային միության ամենամյա մրցանակաբաշխություն

«**Վահան Թեքեյան**» ամենամյա մրցանակաբաշխման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 18-ին, երկուշաբթի օրը, ժամը 15.00-ին, Թեքեյան կենտրոնի (Խանջյան 50) մեծ դահլիճում:

Գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի, քաղաքական երգիծանքի, հեռուստատեսության, մանկական ծրագրերի եւ «**Ազգ**» օրաթերթի հրապարակումների համար տրվող մրցանակների հանձնման արարողությանը կուղեկցի գեղարվեստական ծրագիր:

**ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է**

## ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը տեղեկացնում է, որ ապրիլի 16-ին ժամը 13:00-ին Թեքեյան Կենտրոնի ցուցասրահում տեղի կունենա «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության ցուցահանդես մրցույթը (գեղանկար, քանդակ) անվանակարգերում:

*Հավելված 1*

**Հայաստանի Հանրապետության միջազգային**
**ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է**
**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի եւ կազմի մասին 2010 թվականի (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)**

| | | |
|---|---|---|
| **Տարվա սկիզբ** | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 2,003,675,650.04 ԱՄՆ դոլար |
| այդ թվում՝ | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 2,003,675,041.31 ԱՄՆ դոլար |
| որից՝ | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 79,537,516.00 ՀՓԻ | 124,690,210.24 ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 ԱՄՆ դոլար |
| II. Զուտ արտաքին ակտիվներ | | 1,363,783,517.51 ԱՄՆ դոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,363,782,908.79 ԱՄՆ դոլար |
| **Տարվա վերջ** | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,865,845,815.47 ԱՄՆ դոլար |
| այդ թվում՝ | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,865,845,242.88 ԱՄՆ դոլար |
| որից՝ | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 21,755,714.00 ՀՓԻ | 33,504,555.42 ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 ԱՄՆ դոլար |
| II. Զուտ արտաքին ակտիվներ | | 1,165,960,546.40 ԱՄՆ դոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,165,959,973.81 ԱՄՆ դոլար |

***ՆԱԽԱԳԱՀ*** ***ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ***

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Վարչական շենք, ընդ. մակերեսը՝ 1135,9 քմ, հողամաս 0,07064 հա ընդ. մակերեսով: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Դեղատան փող., թիվ 6 շենք: Մեկնարկային գինը՝ 754000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 03.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկություննեիի, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀՔ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք հրապարակային սակարկություններով՝

- Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 192,9 քմ եւ 150,3 քմ հողամաս: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ռոստոմի փող., 107/1:Մեկն. գինը՝ 20000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 18.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի վարչական տարածքում հողի սեփականատեր Կարեն Մարգարյանի նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 900 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 22-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

***Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 5-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն***

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԳԴ-ԾՁԲ-1

Պատվիրատուն՝ **ՀՀ դատախազությունը**, որը գտնվում է ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել **«հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծառայությունների ձեռքբերման»** գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ դատախազության կարիքների համար **հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծառայությունների** ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Բաց ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ անվճար հրավեր:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀ գլխավոր դատախազություն**՝ ք. Երևան, **Վ.Սարգսյան 5, 21** սենյակ հասցեով, մինչև ս/թ մայիսի 23-ը ժամը **12:00-ն:** Դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Բաց ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

**Հայաստանի Հանրապետության դատախազություն**

## ԼՈՒԾԱՐՎՈՒՄ ԵՆ

«Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ-ի «Մետրոտուր» դուստր ՓԲԸ-ն, գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում գրանցման համարը՝ 264.120.04604, վկայականի համարը՝ 01Ա 044258:

«Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ-ի «Մետրո-Առեւտուր» դուստր ՓԲԸ-ն, գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում, գրանցման համարը՝ 264.070.02521, վկայականի համարը՝ 01Ա 024476:

«Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ-ի «Մետրո-Էգիդա» դուստր ՓԲԸ-ն գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում, գրանցման համարը՝ 264.120.05450, վկայականի համարը՝ 02Ա 050901:

«Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ-ի «Մետրո-Թրավել» դուստր ՓԲԸ-ն գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում գրանցման համարը՝ 264.120.05284, վկայականի համարը՝ 02Ա 049599:

«Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ-ի «Մետրո-Դիզայն» դուստր ՓԲԸ-ն գրանցված ՀՀ պետական ռեգիստի Արաբկիրի տարածքային բաժնում, գրանցման համարը՝ 264.070.03187, վկայականի համարը՝ 01Ա 30605:

Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն «Մետրոպոլիտենի առեւտրային կենտրոն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Երեւան, Բաղրամյան 76, հեռախոս՝ 52-65-57/78 կամ 42-55-70/209:




www.azg.am

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Վեդի քաղաքում Արարատյան 42/2 հասցեով Բանկի մասնաշենքի շինարարական աշխատանքների մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0235) 2 25 08, (098) 29 50 70 («Արարատ» մասնաճյուղ) հեռախոսահամարներով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Արարատ» մասնաճյուղ՝ ք. Արտաշատ, Շահումյան փ. 31, ժամը 10:00-16:30-ը (աշխատանքային օրերին):

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: